Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# Լուսարար

25-26(348-349)
05.08.2013թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар · ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ · Lusarar


## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԸՆԴԳՐԿՎԵԼ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ

*Արցախում նախադպրոցական ցանցի վերականգնումը պետության մտահոգություններից է: Հանրապետության տարբեր բնակավայրերում տարեցտարի շարք մտնող մանկապարտեզները վկայում են երկրի իշխանությունների՝ այս ուղղությամբ տարվող հետևողական քաղաքականության մասին: Նշենք, որ այն ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի նախընտրական ծրագրի դրույթներից է, որը քայլ առ քայլ իրագործվում է:*

*Սակայն միշտ էլ ասվել է, որ այս առումով մայրաքաղաք Ստեփանակերտում վիճակը մտահոգիչ է: Չնայած այստեղ էլ գնալով մանկապարտեզների թիվն աճում է, ցավոք, այդ տարիքի բոլոր երեխաներին հնարավոր չէ ընդգրկել, և նրանցում եղած երեխաները գրեթե երեք անգամ գերազանցում են թույլատրելի սահմանը, ինչը սանիտարահիգիենիկ նորմերի կոպիտ խախտում է՝ դրանից բխող հետևանքներով: Սպասել, թե երբ մայրաքաղաքում կբացվեն այնքան մանկապարտեզներ, որ բավարարեն բոլոր երեխաների պահանջը, երկար կտևի:*

*ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը վերջին տարիներին վիճակից դուրս գալու մի ելք էր ընտրել՝ դպրոցներում բացելով նախադպրոցական խմբեր՝ մանկապարտեզի ավագ խմբի ենթակա երեխաների համար, որը, հասարակության կողմից ընկալվում էր որպես նախապատրաստական դասարան:*

*Իսկ ահա օրերս որդեգրվեց մի նոր քաղաքականություն, որը մեծապես կլուծի առաջացած խնդիրները: Այդ մասին տեղեկացրել ենք «Լուսարարի» թիվ 21-ում: Նորից անդրադառնանք դրան:*



Օրեր առաջ ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի և շահագրգիռ այլ կառույցների ղեկավարների ուղեկցությամբ շրջայց կատարեց մայրաքաղաքի հանրակրթական դպրոցներում՝ տեղում ծանոթանալու մանկապարտեզը և դպրոցը մեկ հարկի տակ մեկտեղելու հնարավորություններին: Այդ մտահղացման պատճառը Ստեփանակերտի մանկապարտեզների գերծանրաբեռնված վիճակն է:

Օգոստոսի 1-ին ԼՂՀ վարչապետ Ա. Հարությունյանի մոտ հրավիրված ընդլայնված խորհրդակցության թեման նորից այս հարցն էր: Մասնակցում էին ԼՂՀ կրթության և գիտության, առողջապահության, քաղաքաշինության նախարարները, ֆինանսների և էկոնոմիկայի փոխնախարարը, Ստեփանակերտի քաղաքապետը, տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ, մայրաքաղաքի դպրոցների և մանկապարտեզների տնօրենները:

Լսվեց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի զեկույցը մայրաքաղաքի նախադպրոցական հիմնարկներում ընդգրկվածության մասին: Սեպտեմբերի 1-ից Ստեփանակերտի հանրակրթական հիմնական դպրոցներում գործելու են երկու տիպի նախադպրոցական խմբեր՝ մանկապարտեզային 9-ժամյա (5-օրյա) և 6-ժամյա (6 -օրյա) տևողության՝ ընդհանուր հաշվով 810 երեխայի ընդգրկմամբ: Առաջին դեպքում երեխաները սնվելու և քնելու հնարավորություն կունենան, երկրորդ դեպքում՝ միայն սնվելու: Կընդգրկվեն այն երեխաները, որոնց 5 տարին լրանում է մինչև դեկտեմբերի 31-ը, այսինքն՝ այդ տարիքի երեխաները մանկապարտեզներից կտեղափոխվեն դպրոցների նախադպրոցական խմբեր: Որոշումը վերաբերում է բոլոր տիպի մանկապարտեզներին՝ ինչպես պետական, այնպես էլ հովանավորչությամբ գործող Հայ օգնության միության և Հայ Ավետարանչական ընկերակցության ու նաև շուտով բացվող մասնավոր մանկապարտեզներին:

Խորհրդակցության ժամանակ որոշվեց, որ 9-ժամյա տևողության նախադպրոցական խմբերում առաջին հերթին կընդգրկվեն մանկապարտեզից տեղափոխվածները: Դրանք կգործեն h. 2, 9, 10 դպրոցներում: Իսկ մյուս երեխաները, որոնք մանկապարտեզ չեն հաճախում, հնարավորություն կունենան ընդգրկվել 6-ժամյա ռեժիմով նախադպրոցական խմբերում՝ ըստ իրենց թաղամասերի դպրոցների: Ինչպես տեղեկացրեց կրթության և գիտության նախարարը, փաստորեն 4,5-5 տարեկան երեխաները, այդ թվում՝ նրանք, ովքեր մինչև հիմա մանկապարտեզ չեն հաճախել, հնարավորություն են ստանում հաճախել հանրակրթական դպրոցների նախադպրոցական խմբեր:

Մանկապարտեզների տնօրեններին հանձնարարվեց մինչև օգոստոսի 20-ը կազմակերպել երեխաների անցումը մանկապարտեզից հանրակրթարանների նախադպրոցական խմբեր: Վերջիններս ներկայացրին, թե ինչքան տեղեր են ազատվում մանկապարտեզներում: Խմբերի առավելագույն խտությունը պետք է լինի 40 հոգի: Արգելվում է դրանից ավել երեխա ընդունելը: Մանկապարտեզներ կընդունվեն մինչև 4,5 տարեկանները: Ս. Ասրյանի խոսքերով, այդ քայլին գնացել են մանկապարտեզները բեռնաթափելու և նրանցում սանիտարական նորմերը պահպանելու նպատակով:

Վարչապետը խիստ հրահանգ տվեց՝ պահանջված քանակից ավել երեխա չվերցնել, հակառակ դեպքում՝ պատասխան կտան: Նա նաև դատապարտեց այն ասեկոսեները, որ մանկապարտեզ երեխաների ընդունելությունը կատարվում է վերադաս մարմինների հովանավորչությամբ: Կրթության և գիտության նախարարը տեղեկացրեց, որ գործընթացը կազմակերպում են մանկապարտեզների տնօրենները՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վերահսկողությամբ: Որոշվեց, որ մանկապարտեզներում թափուր տեղերը կլրացնեն առաջին հերթին ծնողազուրկ, 1-ին, 2-րդ կարգի հաշմանդամների, միայնակ մայրերի, սպայական կազմի, բազմազավակ, աշխատող մայրերի ընտանիքների երեխաները: Նախադպրոցական խմբեր հաճախող երեխաների համար նույնպես կկատարվեն ծնողական մուծումներ՝ հաստատված ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

Կառավարության ղեկավարի հաջորդ հանձնարարականն ուղղված էր առողջապահության նախարար Զոյա Լազարյանին: Հանձնարարվեց ամենօրյա խիստ վերահսկողություն սահմանել երեխաների սննդի, նրա որակի, սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ: Նա պատրաստակամություն հայտնեց անգամ լրացուցիչ հաստիքներ տրամադրել համակարգը վերահսկելու համար: Սննդի որակը լիարժեք վերահսկելու նպատակով առաջարկություն հնչեց ստեղծել մատակարարման ընդհանուր համակարգ: Վարչապետը դա ընդունելի տարբերակ համարեց:

Բնականաբար, մանկապարտեզային տիպի նախադպրոցական խմբերի բացումը ֆինանսական մեծ ծախսերի հետ է կապված: Կրթության և գիտության նախարարն իր առաջարկությունը ներկայացրեց նորաբաց խմբերի հետ կապված հաստիքների վերաբերյալ: Կառավարության ղեկավարն առաջարկեց հարցը քննարկել առաջիկա տասօրում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հետ:

Իսկ դպրոցներում ստեղծված մանկապարտեզային խմբերի երեխաների համար հարմարավետ պայմանների ապահովման առնչությամբ քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյանը հավաստիացրեց, որ մինչև սեպտեմբերի 1-ը դրանք կավարտեն: Ասենք, որ դպրոցում գործող նախադպրոցական խմբերը կունենան իրենց առանձին մուտքը, և դպրոցական ու նախադպրոցական սաներն իրար չեն խանգարի: Ինչ մնում է կահավորմանը, վարչապետը խոստացավ դա կազմակերպել «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ:

Ա. Հարությունյանը հետաքրքրվեց նաև նախադպրոցական խմբերի դաստիարակների լրակազմի հարցով: Ս. Ասրյանը տեղեկացրեց, որ նախարարությունը համապատասխան կարգ է մշակել, ըստ որի, դաստիարակները կընտրվեն մրցույթով. կարգը և հարցաշարերը զետեղված են նախարարության կայքէջում և «Լուսարար» պաշտոնաթերթում:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ ԼՂՀ վարչապետն ասաց, որ փաստորեն նման ձևով լուծում են Ստեփանակերտում նախադպրոցական տարիքի համարյա բոլոր երեխաների խնդիրը նախակրթարաններում ընդգրկվածության առումով: Ավելի քան 800 տեղ է բացվում, բացի այն, որ մինչև տարեվերջ շուրջ 160 երեխաների ընդգրկմամբ երկու մասնավոր մանկապարտեզ ևս կգործի: Մայրաքաղաքում կառուցվող մեկ և վերակառուցվող երկու մանկապարտեզները մոտ ապագայում ավելի շատ երեխաներ ընդգրկելու հնարավորություն կստեղծեն:

Վարչապետը հորդորեց դպրոցի տնօրեններին սկզբնական փուլում ավելի շատ ուշադրություն դարձնել նախադպրոցական խմբերի աշխատանքին:

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

«26» հուլիսի 2013թ. N 169/Մ

ք. Ստեփանակերտ

**Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի գրավոր և բանավոր փուլերի հարցաշարերը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 19-ի N167-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի պահանջը՝

*Հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ.*

1. Հաստատել ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի գրավոր և բանավոր փուլերի հարցաշարերը՝ համաձայն հավելված 1-ի, հավելված 2-ի, հավելված 3-ի և հավելված 4-ի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ հարցաշարերը տեղադրել ԼՂՀ կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայքէջում:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի խմբագիր Ս. Խաչատրյանին՝ հարցաշարերը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:

**Ս. ԱՍՐՅԱՆ**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 1*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Ա հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ

## ՀԱՐՑԱՇԱՐ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է…
- *Ժողովրդին:*

(ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 3)

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի ընտրությունները անցկացվում են...
- *Ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:*

(ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 4)

3. Ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է…
- *Օրենքով:*

(ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 41.7)

4. Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունը…
- *Անվճար է:*

(ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 41.3)

5. Կրթության ո՞ր աստիճանն է պարտադիր:
- *Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ:*

(ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 41.2)

6. Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը…
- *Ազգային դպրոցն է:*

(«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 4.2)

7. Ազգային դպրոցի գլխավոր նպատակը…
- *Մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:*

(«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 4.2)

8. Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է...
- *Օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով*:

(«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 14.2)

9. Օրինակելի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում և հաստատում է…
- *Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

(«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 14.2)

10. Ի՞նչ օրենսդրական ակտով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ:
- *Օրենքով:*

(ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 41.2)

11. Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը…
- *Հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է:*

(«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 32.1)

12. Հանրակրթական հիմնական ծրագրերը…
- *Ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի և դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ամբողջությունն է:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.1)

13. Հանրակրթական պետական ծրագրի օրինակելի ուսումնական պլանը կազմված է...
- *Պետական և դպրոցական բաղադրիչներից:*
(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5)

14. Պետական բաղադրիչը ներառում է…
- *Առարկայացանկը և դրան հատկացվող ժամաքանակները:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5.1)

15. Դպրոցական բաղադրիչին հատկացված ժամաքանակը նախատեսված է…
- *Հոսքային կամ առանձին առարկաների խորացված կրթական ծրագրերի իրականացման և (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5.2)

16. Դպրոցական բաղադրիչը տնօրինում է…
- *Ուսումնական հաստատությունը:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5.2)

17. Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն օրինակելի ուսումնական պլանի հիման վրա հաստատում է…
- *Իր ուսումնական պլանը:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5.2)

18. Ուսումնական տարին բաղկացած է …
- *Ուսումնական շաբաթներից, քննաշրջաններից և արձակուրդներից:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.2)

19. Պետական ուսումնական հաստատության ուսուցչի մեկ դրույքի լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը (դասավանդման ծավալը) չի կարող գերազանցել…
- *Շաբաթական քսաներկու դասաժամը:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 25.3)

20. Ուսումնական շաբաթների թիվը սահմանվում է…
- *Հենքային ուսումնական պլանով:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.3)

21. Պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է…
- *Ուսումնական հաստատությունը՝ օրենքով սահմանված ժամկետում համաձայնեցնելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.4)

22. Ոչ պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է…
- *Հիմնադիրը՝ օրենքով սահմանված ժամկետում համաձայնեցնելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.4)

23. ԼՂՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն…
- *Գրական հայերենն է:*

(«Լեզվի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 2, մաս-1)

24. Ո՞վ է համարվում երեխա:
- *Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:*

(«Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք, հոդված 1)

25. Ի՞նչ է ստուգում և ուսումնասիրում Կրթության պետական տեսչությունը:
- *Նախադպրոցական, հանրակրթական հիմնական, հատուկ ընդհանուր, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կրթական գործունեությունը՝ անկախ կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:*

(«Կրթության պետական տեսչության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 9, մաս )

26. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության բնագավառում պետական կառավարման տարածքային մարմինների իրավասություններից է…
- *Վկայագրել երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:*

(«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 19)

27. Հանրակրթության ոլորտում միջազգային կրթական ծրագրերի առանձնահատկությունները ո՞ր օրենքով են սահմանվում:
- *«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքով:*

(«Լեզվի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 2, մաս-4)

28. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է…
- *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:*

(«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 10.1)

29. Ամենամյա արձակուրդը լինում է…
- *Նվազագույն, երկարացված և լրացուցիչ:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 158.2)

30. Ո՞ր դեպքում ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով:
- *Կողմերի համաձայնությամբ:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 163)

31. Ո՞րն է համարվում աշխատանքային կարգապահության խախտում:
- *Աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 220)

32. Ո՞ր դեպքում է կարգապահական տույժը համարվում մարված:
- *Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, աշխատողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 229)

33. Ո՞ր դեպքում կարգապահական տույժը կարող է հանվել:
- *Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 230)

34. Ո՞րն է համարվում ձեռնարկատիրական գործունեություն:
- *Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:*

(ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 2)

35. Իրավական ակտերն իրենց բնույթով լինում են…
- *Նորմատիվ, անհատական (ոչ նորմատիվ) կամ ներքին (լոկալ):*

(«Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 2.2)

36. Ո՞ր տարիքը լրանալուց հետո է առաջանում վարչական պատասխանատվություն:
- *Վարչական պատասխանատվության ենթակա են այն անձինք, որոնց տասնվեց տարին լրացել է մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը:*

(«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ԼՂՀ օրենսգիրք, հոդված 12)

37. Իրավական ակտը համարվում է նորմատիվ...
- *Եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ:*

(«Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 2.3)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 1*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Մ հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ

## ՀԱՐՑԱՇԱՐ

38. Ո՞րն է հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը:
*- Հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 30)

39. Դասի տևողությունը սահմանվում է…
*- Հանրակրթության պետական չափորոշիչով:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 30)

40. Հանրակրթական դպրոցն օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը բաշխում է…
*- Պետական բաղադրիչով սահմանված, նախարարության կողմից երաշխավորված կամ հանրակրթական դպրոցի կողմից մշակված և նախարարության կողմից հավանություն ստացած առարկաներին:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 33)

41. Ո՞րն է հանրակրթական դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը:
*- Խորհուրդը:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 49)

42. Ո՞ր մարմնի սահմանած կարգով է ձևավորվում խորհուրդը:
*- Խորհուրդը ձևավորվում է նախարարության սահմանած կարգով:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 50)

43. Խորհրդի անդամների թեկնածուներ առաջադրում են…
*- Մանկավարժական խորհուրդը, ծնողական խորհուրդը, տարածքային կառավարման մարմինը, նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինը:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 53)

44. Կառավարման ո՞ր մարմնի պահանջով և խորհրդի անվանական կազմի հաստատումից հետո ի՞նչ ժամկետում է գումարվում խորհրդի առաջին նիստը:
*- Տարածքային կառավարման մարմնի պահանջով՝ յոթնօրյա ժամկետում:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 57)

45. Ձայների ի՞նչ հարաբերակցությամբ և քվեարկության ի՞նչ ձևով է ընտրվում խորհրդի նախագահը:
*- Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, փակ քվեարկությամբ:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 58)

46. Ո՞ւմ կողմից են գումարվում խորհրդի նիստերը:
*- Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, տնօրենի, խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 61)

47. Հանրակրթական դպրոցի տնօրենը ի՞նչ կարգավիճակով է մասնակցում խորհրդի նիստերին:
*- Խորհրդակցական ձայնի իրավունքով:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 68.3)

48. Ի՞նչ ժամկետներում են գումարվում մանկավարժական խորհրդի նիստերը:
*- Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝*
*1) տնօրենի նախաձեռնությամբ.*
*2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.*
*3) նախարարության և (կամ) տարածքային կառավարման մարմնի և Ստեփանակերտի քաղաքապետի նախաձեռնությամբ:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 84)

49. Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումն ապահովում է…
*- Հանրակրթական դպրոցի տնօրենը:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 89)

50. Հանրակրթության պետական չափորոշիչը մշակում է…
*- Կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:*

(Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ, բաժին 2, կետ 3)

51. Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատում է…
*- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:*

(Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ, բաժին 3, կետ 5)

52. Առարկայական չափորոշիչը հաստատում է…
*- Կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:*

(Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ, բաժին 3, կետ 6)

53. Ինչպե՞ս է սահմանվում «ուսուցիչ» հասկացությունը:
*- Ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատող:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 3. կետ 13)

54. Ինչպե՞ս է սահմանվում «Ուսուցչի վերապատրաստում» հասկացությունը:
*- Վերապատրաստող կազմակերպություններում ուսուցչի կողմից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած՝ ուսուցչի վերապատրաստման չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան մասնագիտական նոր գիտելիքների, հմտությունների և ունակությունների յուրացում ու կատարելագործում:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 26.10)

55. Ինչպե՞ս է սահմանվում «Ուսուցչի ատեստավորում» հասկացությունը:
*- Ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության որոշման գործընթաց:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 3.14)

56. Ինչպե՞ս է սահմանվում «Ուսուցչի որակավորման տարակարգ» հասկացությունը:
*- Ուսուցչի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ու կարողություններին համապատասխանող որակավորման չափանիշ:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 26.24)

57. Ի՞նչ է ուսուցման մեթոդը:
*- Մանկավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն:*

(գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար ( - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004, 180 էջ)

58. Ինչո՞վ է պայմանավորված դասի ընթացքում կիրառվող մեթոդների ընտրությունը:
*- դասի նպատակով:*

(գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար ( - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ, 180 էջ)

59. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:
*- Էքսկուրսիա:*

(գլ. 5, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II / - Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

60. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:
*- Ցուցադրում:*

(գլ. 5, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

61. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:
*- Դիտում:*

(գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

62. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:
*- Իլյուստրացիա:*

(գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

63. Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:
*- Զրույց:*

(գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

64..Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:
*- Դասախոսություն:*

(գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

65. Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:
*- Աշխատանք դասագրքով:*

(գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

66. Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:
*- Վարժություններ:*

(գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

67. Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:
*- Գործնական աշխատանքներ:*

(գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

68. Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:
*- Լաբորատոր աշխատանքներ:*

(գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

69. Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:
*- Ճանաչողական խաղեր:*

(գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

70. Ո՞ր խմբերը կարելի է համարել համագործակցային:
*- Այն խմբերը, որոնց անդամները գիտակցում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից:*

(գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ. / Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր. Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ., 180 էջ)

71. Ի՞նչ ենք հասկանում ակտիվ ուսումնառություն ասելով:
*- Ակտիվ ուսումնառության ընթացքում սովորողները սոսկ խոսքով կամ տեսողական տեղեկատվություն ստանալու փոխարեն դառնում են և՛ մասնակից, և՛ կատարող:*

(Բաժին 1, Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., էլոյան Ն., Շահրոքի Ֆ. /Դպրոցի ☞ 4

*Հավելված 1*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Մ հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ

## ՀԱՐՑԱՇԱՐ

3 ☜

ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ,, 296 էջ)

72. Ի՞նչ ենք հասկանում ուսուցում ասելով:
*- Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է:*

(գլ. V, Ղուլումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

73. Ի՞նչ ենք հասկանում կարողություն ասելով:
*- Կարողությունները գիտելիքներն են գործողության մեջ:*

(գլ. V, Ղուլումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

74. Ի՞նչ ենք հասկանում հմտություն ասելով:
*- Հմտությունները կարողությունների կառուցվածքում ձևավորված գործունեության առանձին դրսևորումների ավտոմատացված տարրերն են:*

(գլ. V, Ղուլումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

75. Նշվածներից ո՞րի միջոցով է իրականացվում սովորողների առաջադիմության կիսամյակային գնահատումը 2-12-րդ դասարաններում:
*- Միավորային գնահատման:*

(Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն/, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, 2008թ.)

76. Ի՞նչն է բնորոշ համագործակցային ուսուցմանը:
*- Առավել արդյունավետ պայմանների առկայությունը սոցիալական հմտությունների ձևավորման համար:*

(գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ., 180 էջ)

77. Ո՞րն է սովորողների գնահատման գլխավոր նպատակը:
*- Կրթության որակի բարելավումը:*

(Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն/, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, 2008թ.)

78. Ի՞նչ ենք հասկանում հավակնությունների մակարդակ ասելով:
*- Արդյունքների այն մակարդակը, որին ցանկանում է մարդը հասնել տվյալ ժամանակահատվածում, տվյալ գործունեությունն իրականացնելիս:*

(Գլ 13, Նալչաջյան, Ա.,Հոգեբանության հիմունքներ, Երևան, «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

79. Նշվածներից ո՞րն է արտահայտում «նպատակ» (դասի, գործունեության) հասկացության բովանդակությունը:
*- Նպատակը ցանկալի և նախապես կանխատեսելի վերջնական արդյունքն է:*

(գլ. V, Ղուլումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ)

80. Ի՞նչ ենք հասկանում կազմակերպության առաքելություն ասելով:
*- Առաքելությունը կազմակերպության համար ցանկալի ապագայի մտապատկերն է:*

(Բաժին 2, Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., Էլոյան Ն., Շահրոքի Ֆ. /Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ., 296 էջ)

81. Ո՞ր հատկությունն է բնորոշ գրեթե բոլոր դեռահասներին:
*- Ինքնուրույն լինելու ձգտումը:*

(գլ. III, Ղուլումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ:)

82. Ի՞նչ է նշանակում վճիռ կայացնել:
*- Առաջնությունը տալ լուծումներից մեկին, մյուսներին ճնշել, հեռացնել վարքի ոլորտից:*

(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան., «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

83. Ի՞նչ ենք հասկանում գործունեություն ասելով:
*- Գործունեությունը գործողությունների շղթա է, որը միավորված է միասնական նպատակով և դրդապատճառներով:*

(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

84. Պատիժը ինչի՞ն պետք է ուղղված լինի:
*- Շեղումների կանխարգելմանը և ոչ մի դեպքում՝ անձի նսեմացմանը:*

(Գլ. III, Ղուլումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ., 464 էջ

85. Ի՞նչ ենք հասկանում վարք ասելով:
*- Վարքը գործունեության արտաքին, առարկայական, դիտման համար մատչելի դրսևորումն է:*

(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

86. Ի՞նչ փուլերից է բաղկացած սթրեսը:
*- Տագնապ, դիմադրություն, սպառում:*

(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

87. Ի՞նչ է սահմանում հանրակրթության պետական չափորոշիչը:
*- Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական պահանջները և սովորողների գնահատման համակարգը:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 1)

88. Ու՞մ համար են պարտադիր հանրակրթության պետական չափորոշչի նորմերը և դրույթները:
*- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության կառավարման մարմինների, տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր, հատուկ և մասնագիտացված հանրակրթական ծրագրեր (այսուհետ՝ հանրակրթական ծրագրեր) մշակողների և իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ու սեփականության ձևերից և ենթակայությունից:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 3)

89. Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝
*- Մշակվում են պետական և այլընտրանքային հանրակրթական ծրագրերը:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.1)

90. Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝
*- Փորձաքննության են ենթարկվում հաստատման ներկայացված այլընտրանքային հանրակրթական ծրագրերը:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.2)

91. Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝
*- Կազմակերպվում են հանրակրթական ծրագրերի իրականացումը և դրանց պետական վերահսկողությունը:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.3)

92. Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝
*- Գնահատվում են հանրակրթության արդյունքները:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.4)

93. Ինչպե՞ս է ներկայացվում միջնակարգ կրթության ծրագրերի բովանդակությունը:
*- Միջնակարգ կրթության ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է առարկայական ծրագրերի միջոցով և հանրակրթության պետական չափորոշչի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, բաժին 5, կետ 10)

94. Նշվածներից ո՞րն է ուսումնական բնագավառի ներկայացման կրթության բովանդակային բաղադրիչներից:
*- Կարողությունները և հմտությունները:*

(գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ., 180 էջ)

95. Նշվածներից ո՞րն է ուսումնական բնագավառի ներկայացման կրթության բովանդակային բաղադրիչներից:
*- Արժեքային համակարգը:*

(գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ Եր., Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ., 180 էջ)

96. Ո՞րն է կոլեկտիվ ուսուցման կազմակերպման դեպքում ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունը:
*- Տարբեր աշակերտներ կարող են զբաղվել տարբեր ուսումնական առարկաներով, ընդմիջումներ անել տարբեր ժամանակահատվածներում:*

(Մ.Ա.Մկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման տարրերը; Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բյուրակն» կրթական համալիր; Երևան, 2009 թ.)

97. Կոլեկտիվ ուսուցման կազմակերպման դեպքում որո՞նք են ուսումնական խմբի անդամի գործունեության առանձնահատկությունները:
*- Սովորող է, սովորեցնող և աշխատանքը կազմակերպող:*

(Մ.Ա.Մկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման տարրերը; Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բյուրակն» կրթական համալիր, Երևան, 2009թ.)

98. Ո՞վ է ի պաշտոնե պարտավոր ապահովել աշխատողների առողջությունն ու անվտանգությունը:
*- Աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 243. կետ 2)

99. Որքա՞ն պետք է լինի աշակերտների թվաքանակը դպրոցում:
*- Այն չպետք է գերազանցի տվյալ շենքի կառուցման կամ վերակառուցման նախագծով սահմանված թվաքանակը:*

(Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ, N 2.III.4-2…մաս 3.կետ 6)

100. Ինչպե՞ս է հաշվառվում ուսումնական սենյակների (դասասենյակներ) տարածքը:
*- Ուսումնական սենյակների (դասասենյակներ) տարածքը հաշվառվում է՝ ելնելով 1 աշակերտի համար՝ 2մ2:*

(Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ, N 2.III.4-2…մաս 3.կետ 11)

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 2*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Մ հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ

1. Դպրոցում աշխատող կենսաբանության ուսուցիչը կարո՞ղ է զբաղեցնել քիմիայի ուսուցչի թափուր պաշտոնը:
*- Կարող է, եթե ունի նաև քիմիայի ուսուցչի որակավորում կամ` բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդվ. 26, մաս 1)

2. Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ինչպիսի՞ խորհրդակցական մարմիններ են ձևավորվում:
*- մանկավարժական խորհուրդ*
*- առարկայական մեթոդական միավորումներ*
*- ծնողական խորհուրդ*
*- աշակերտական խորհուրդ*
*- հոգաբարձուների խորհուրդ*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 77)

3. Բացի մանկավարժներից, ովքե՞ր կարող են ընդգրկվել դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում:
*- Խորհրդակցական մարմինների ներկայացուցիչները:*

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 78.1

4. Ո՞ր մարմիններն են առաջադրում կառավարման խորհրդի անդամների թեկնածուներ.
*- մանկավարժական խորհուրդը.*
*- ծնողական խորհուրդը.*
*- տարածքային կառավարման մարմինը, նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինը:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 53)

5. Ե՞րբ և ի՞նչ ժամկետով է կազմավորվում մանկավարժական խորհուրդը:
*- Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով` մեկ ուսումնական տարի ժամկետով:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 78)

6. Որտե՞ղ է արձանագրվում մանկավարժական խորհրդի անվանական կազմը:
*- Մանկավարժական խորհրդի անվանական կազմը արձանագրվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 78)

7. Ի՞նչ սկզբունքներով է ձևավորվում մանկավարժական խորհրդի կազմը:
*- Քառասուն մանկավարժներից ավելի համակազմ ունեցող հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են` տնօրենը, ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալները, առարկայական մեթոդական միավորումների նախագահները, դասղեկները, ծնողական խորհրդի, հոգաբարձումների խորհրդի մեկական ներկայացուցիչներ, արհմիութենական կոմիտեի նախագահը, առարկայական մեթոդական միավորումների կողմից առաջադրված 3-5 մանկավարժներ, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը, ինչպես նաև այլ խորհրդակցական մարմինների ներկայացուցիչներ.*
*- մինչև քառասուն մանկավարժներից կազմված հանրակրթական դպրոցներում բոլոր մանկավարժական աշխատողները համարվում են մանկավարժական խորհրդի անդամներ:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 78.1.2)

8. Ինչպե՞ս են ստեղծվում մեթոդական միավորումները:
*- Մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ հարակից առարկաների ուսուցիչներից:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 90)

9. Ե՞րբ են գումարվում մեթոդական միավորումների նիստերը և արձանագրվո՞ւմ են դրանք, թե՞ ոչ:
*- Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 94)

10. Ո՞վ է ղեկավարում մանկավարժական խորհրդի աշխատանքը:
*- Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հանրակրթական դպրոցի տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը), որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 82)

11. Ինչպիսի՞ ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել հանրակրթական դպրոցը:
*- Համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում*
*- Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում:*
*- Լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.*
*- ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում.*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 15)

12. Ի՞նչ աշխատանք է իրականացնում դասարանի ղեկավարը դպրոցում:
*- Հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 76, ենթ. 6)

13. Ի՞նչ աշխատանք է իրականացնում դասղեկը դպրոցում:
*- Իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 76, ենթ. 4)

14. Ի՞նչ աշխատանք է իրականացնում դասարանի ղեկավարը դպրոցում:
*- Կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 76, ենթ. 5)

15. Ինչպիսի՞ որոշումներ է ընդունում դպրոցի մանկավարժական խորհուրդը.
*- սովորողներին դասարանից դասարան (այդ թվում` հանրակրթական դպրոցի կազմում` հիմնական կրթության 2-րդ մակարդակից 3-րդ մակարդակ փոխադրվելիս) փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու և նույն դասարանում մնալու մասին:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 81, ենթ. 3)

16. Մանկավարժական խորհրդի անդամ չհանդիսացող ուսուցիչը մանկավարժական խորհրդի օրակարգի լրացում կատարելու առաջարկ է կատարել, և մանկավարժական խորհուրդը այն ընդունել է: Կարո՞ղ է մանկավարժական խորհրդի անդամ չհանդիսացող ուսուցիչը ներկա գտնվել մանկավարժական խորհրդի նիստերին:
*- Կարող է, քանի որ մանկավարժական խորհրդի նիստերը բաց են: Հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում չընդգրկված բոլոր մանկավարժները կարող են ներկա գտնվել նիստերին` խորհրդակցական ձայնի իրավունքով:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 85)

17. Ե՞րբ է իրավազոր մանկավարժական խորհրդի նիստը.
*- եթե դրան մասնակցում են մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, իսկ խորհրդի ընտրության ժամանակ` առնվազն 2/3-ը:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 86)

18. Ո՞վ է արձանագրում մանկավարժական խորհրդի նիստերը:
*- Նիստերն արձանագրում է մանկավարժական խորհրդի անդամներից ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում ընտրվում է նոր քարտուղար:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 83 )

19. Ո՞ւմ նախաձեռնությամբ են գումարվում մանկավարժական խորհրդի նիստերը:
*- Տնօրենի նախաձեռնությամբ.*
*- մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.*
*- նախարարության և (կամ) տարածքային կառավարման մարմնի, Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 84)

20. Ի՞նչ ժամկետներում են գումարվում մանկավարժական խորհրդի նիստերը:
*- Առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 84)

21. Մանկավարժական խորհուրդը քննարկում է.
*- ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 80.3 )

22. Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում.
*- հանրակրթական դպրոցի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 81.1)

23. Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում.
*- հանրակրթական դպրոցի ավագ դասարանի հոսքերի ձևավորման մասին:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 81.2)

24. Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում.
*- հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և ներկայացնում է տնօրենի հաստատմանը:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 81.11)

25. Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում.
*- օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսում կիրառելու մասին:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 81.10)

26. Մանկավարժական խորհուրդը ինչպե՞ս է ընտրում դպրոցի կառավարման խորհրդի անդամության թեկնածու:
*- Մանկավարժական խորհուրդը, նախարարության սահմանած կարգով, իր կազմից, գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի անդամության թեկնածուներ:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 79)

27. Հանրակրթական դպրոցից սովորողին այլ հանրակրթական դպրոց տեղափոխելը և (կամ) ազատելը կատարվում են նախարարության կողմից սահմանված կարգով` հետևյալ դեպքերում:
*- Ծնողի դիմումի հիման վրա:*
*- Դատարանի` օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 36)

☞ 6

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 2*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Ս հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ

5 ☜

28. Հանրակրթական ուսումնական հաստատության հիմնական և ավագ դպրոցներում դասավանդող հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչները սովորողների ծնողներից դիմումներ են ստացել և առաջարկում են կազմակերպել վճարովի լրացուցիչ կրթական ծրագիր տվյալ առարկաներից:

*- Տարրական, միջին, հիմնական, միջնակարգ հաստատություններում և վարժարաններում (1-9-րդ դասարանցիների մասնակցությամբ) վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթություն կարող է իրականացվել միայն ուսումնական պլանով տվյալ դասարանի առարկայացանկում չընդգրկված առարկաներից:*

(Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, Հավելված ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1496-Ն որոշման)

29. Հանրակրթական դպրոցի տնօրենը.

*- Նշանակում է իր տեղակալներին, մասնաճյուղի, կառուցվածքային ստորաբաժանումների (մեթոդական միավորումների) ղեկավարներին, կատարում է աշխատանքի բաշխում նրանց միջև` համաձայն կանոնադրության և Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի պաշտոնների նկարագրերի*:

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 68.8)

30. Ե՞րբ կարող է աշխատողն աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման մասին որոշումը (աշխատանքից ազատվելու դիմումը) հետ վերցնել:

*- Աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնել ոչ ուշ, քան այն ներկայացնելու օրվանից հետո` երեք աշխատանքային օրվա ընթացքում:*

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվ. 112, մաս 3)

31. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը ենթակա է ատեստավորման.

*- արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 26, մաս 25)

32. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ ճանաչված ուսուցիչը ի՞նչ ժամկետում է ենթակա ատեստավորման:

*- Ուսուցիչն այդ դեպքերում ենթակա է ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո` չորսամսյա ժամկետում:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 26, մաս 35)

33. Եթե գործատուն գտնում է, որ նախատեսված աշխատանքում աշխատողի համապատասխանության ստուգման նպատակով սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով աշխատողը չի համապատասխանում առաջադրված պահանջներին, ապա ե՞րբ և ինչպե՞ս կարող է ազատել աշխատողին:

*- Գործատուն կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից` այդ մասին երեք օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդվ. 93, մաս 1)

34. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը սովորողների ուսուցման որակը բարելավելու նպատակով որոշում է կայացնում դասարանը բաժանել խմբերի նաև ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, հայոց պատմության դասաժամերին: Արդյո՞ք մանկավարժական խորհուրդը նման որոշում կայացնելու իրավունք ունի:

*- Դպրոցի մանկավարժական խորհուրդը նման որոշում կայացնելու իրավունք չունի: Առանձին առարկաների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել խմբերի` դպրոցի կառավարման խորհրդի որոշմամբ` շահույթի հաշվին:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 24)

35. Ատեստավորման հանձնաժողովը որոշում է ընդունել այն մասին, որ ատեստավորման ներկայացած ուսուցիչը «Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին», որի հիման վրա հաստատության տնօրենը որոշումը ստանալուց մեկ շաբաթ հետո պաշտոնից ազատում է ուսուցչին: Արդյո՞ք իրավացի է հաստատության տնօրենը:

*- Իրավացի է, քանի որ ատեստավորման հանձնաժողովի որոշումը կարող է հնգօրյա ժամկետում բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազորված մարմին կամ դատական կարգով:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 26, մաս 18)

36. Հանրակրթական դպրոցներում ե՞րբ է սկսվում ուսումնական տարին:

*- Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին*:

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդվ. 15.1)

37. Մանկավարժական խորհրդի որոշմամբ հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի սովորողը կարո՞ղ է ենթարկվել կարգապահական տույժի:

*- Տարրական դպրոցի սովորողի նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվում: Ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով կարգապահական տույժեր` նկատողություն և խիստ նկատողություն կարող են կիրառվել միայն միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդվ. 21, մաս 2, «ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 76.6)

38. Ինչպե՞ս է սահմանվում հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը:

*- Սահմանվում է ըստ կրթական ծրագրերի աստիճանների:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, բաժին 2, կետ 4.2)

39. Թվարկել հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված ուսումնական բնագավառները`

- *հայոց լեզու, գրականություն.*
- *օտար լեզուներ.*
- *մաթեմատիկա.*
- *տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ (այսուհետ` ՏՀՏ), համակարգչային գիտություններ.*
- *բնություն, բնական գիտություններ.*
- *հասարակություն, հասարակական գիտություններ.*
- *արվեստ.*
- *տեխնոլոգիա.*
- *ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, բաժին 5, կետ 12)

40. Ի՞նչ է սահմանում հանրակրթության պետական չափորոշիչը:

*- Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական պահանջները և սովորողների գնահատման համակարգը:*

(Հանրակրթության պետական չափորոշիչ, բաժին 1, կետ 1)

41. Հանրակրթական հիմնական ծրագրերը, ըստ աստիճանների, դասակարգվում են.

- *1-ին աստիճան - տարրական*
- *2-րդ աստիճան - հիմնական*
- *3-րդ աստիճան - միջնակարգ*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդ. 7, կետ 7)

42. Ուսումնական հաստատությունը, ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի լինում են:

- *Տարրական դպրոց /1-4-րդ դաս.*
- *Միջին դպրոց /5-9-րդ դաս./*
- *Հիմնական դպրոց /1-9-րդ դաս./*
- *Ավագ դպրոց /10-12-րդ դաս./*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդ. 8, կետ 5)

43. Ովքե՞ր իրավունք չունեն զբաղեցնելու մանկավարժական աշխատողի պաշտոն:

*- Մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը`*

*1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.*

*2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.*

*3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.*

*4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24.2)

44. Ի՞նչ եղանակներով է իրականացվում ուսումնական գործընթացը ուսումնական հաստատություններում:

*- Ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացվում է խմբային կամ անհատական ուսուցման եղանակով:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 17.1)

45. Ո՞րն է ուսումնական հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը:

*- Ուսումնական հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 17.3)

46. Ո՞ր նորմատիվ փաստաթղթով է սահմանվում դասի տևողությունը:

*- Դասի տևողությունը սահմանվում է հանրակրթության պետական չափորոշիչով:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 17.3)

47. Ի՞նչ հաճախականությամբ են հրավիրվում մեթոդական միավորումների նիստերը:

*- Ամիսը առնվազն մեկ անգամ:*

(«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 94)

48. Ըստ հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանի, սահմանվում են ուսումնական շաբաթներ`

*- 1-ին դասարանի համար` առնվազն 30, 2-րդ դասարանի համար` առնվազն 32, 3-12 դասարանների համար` առնվազն 34 շաբաթ:*

(«Օրինակելի ուսումնական պլաններ» ընդհանրական պարզաբանումներ, կետ 3)

49. Ի՞նչ սկզբունքով է իրականացվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը:

*- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը հանրակրթական դպրոցում իրականացվում է ներառական կրթության սկզբունքով:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 17.5)

50. Ովքե՞ր են ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցները`

- *սովորողը.*
- *սովորողի ծնողը.*
- *ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ.*
- *վարչական աշխատողները.*
- *խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված` կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլ անձինք:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 19)

51. Ո՞ր իրավական ակտերով են սահմանվում ուսումնական հաստատություններում սովորողների իրավունքներն ու պարտականությունները:

- *Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ, որոնք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 20.1)

52. Թվարկել սովորողի իրավունքներից առնվազն 4-ը:

- *ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.*
- *ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.*

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

*Հավելված 2*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Ս հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ

- *անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.*
- *մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.*
- *պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.*
- *ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.*
- *ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.*
- *ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.*
- *օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 20.2)

53. Թվարկել սովորողների պարտականություններից առնվազն 2-ը.
- *կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.*
- *ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.*
- *հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.*
- *կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 20.3)

54. Ինչպե՞ս է համալրվում ուսուցչի թափուր տեղը:
- *Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության, բացառությամբ նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածուի առկայության դեպքերի:*

(«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24.3)

55. Դպրոցի տնօրենը մեկ ուսումնական տարի փորձաշրջանով աշխատանքի է ընդունել ֆիզիկայի ուսուցչի: Գնահատել տնօրենի գործողությունը:
- *Փորձաշրջանի ժամկետը չի կարող երեք ամսից ավելի լինել, բացառությամբ ԼՂՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի՝ մինչև վեց ամիս ժամկետով կարող է սահմանվել փորձաշրջան: Տնօրենը սխալ է թույլ տվել:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 92. կետ 1 և 2)

56. Ուսումնական հաստատության տնօրենը լուծել է աշխատանքային պայմանագիրը աշխատողի հետ՝ պատճառաբանելով, որ նա արհեստակցական միության անդամ է: Գնահատել տնօրենի գործողությունը:
- *Արհեստակցական միությանը անդամակցելը աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել: Տնօրենը խախտել է աշխատանքային օրենսգրքի պահանջը:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 114. կետ 4.1)

57. Ուսումնական հաստատության վերակազմակերպման հետևանքով ուսուցչի հետ լուծվել է աշխատանքային պայմանագիրը: Մեկնաբանել:
- *Կազմակերպության վերակազմակերպումը, ինչպես նաև դրա նկատմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե տեղի չի ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 126)

58. Մեկնաբանել «ամենամյա արձակուրդ» հասկացությունը:
- *Ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար: Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը), և վճարվում է միջին աշխատավարձը:*

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 158)

59. Ի՞նչ հիմնական ձևերից է բաղկացած ընթացքիկ գնահատման համակարգը:
- *Միավորային գնահատում,*
- *Ուսուցանող գնահատում:*

(Մեթոդական ցուցումներ 2012-2013 ուսումնական տարում ԼՂՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ)

60. Ի՞նչ հիմնական տեսակներով է իրականացվում միավորային գնահատումը:
- *Բանավոր հարցում,*
- *Գործնական աշխատանք,*
- *Թեմատիկ աշխատանք,*
- *Կիսամյակային ամփոփիչ աշխատանք:*

(Մեթոդական ցուցումներ 2012-2013 ուսումնական տարում ԼՂՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ)

61. Ինչպե՞ս է ձևավորվում աշակերտի կիսամյակային գնահատականը բոլոր առարկաներից՝ բացառությամբ շաբաթական մինչև 1,5 ժամ ունեցող ուսումնական առարկաների:
- *Հաշվվում է կիսամյակի ընթացքում միավորային գնահատման բոլոր տեսակներից՝ բացառությամբ կիսամյակային աշխատանքի, աշակերտի ստացած գնահատականների միջին թվաբանականը և այն մոտարկվում է ամբողջ թվով,*
- *Հաշվվում է ստացված միջին թվաբանականի և կիսամյակային աշխատանքից ստացած գնահատականի միջին թվաբանականը և այն մոտարկվում է ամբողջ թվով:*
- *Ստացված ամբողջ թիվը կլինի աշակերտի կիսամյակային գնահատականը:*

(Մեթոդական ցուցումներ 2012-2013 ուսումնական տարում ԼՂՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ)

62. Ինչպե՞ս է ձևավորվում աշակերտի կիսամյակային գնահատականը շաբաթական մինչև 1,5 ժամ ունեցող ուսումնական առարկաների դեպքում:
- *Շաբաթական մինչև 1,5 ժամ ունեցող ուսումնական առարկաների դեպքում կիսամյակային գնահատականը ձևավորվում է միավորային գնահատման բոլոր տեսակներից ստացված գնահատականների միջին թվաբանականով:*

(Մեթոդական ցուցումներ 2012-2013 ուսումնական տարում ԼՂՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ)

63. Ի՞նչ ենք հասկանում ընթացիկ գնահատման համակարգ ասելով:
- *Ընթացիկ գնահատման համակարգ ասելով հասկանում ենք ուսումնառության ընթացքում ուսուցչի կողմից աշակերտների ձեռքբերումների մասին կանոնակարգված քանակական և որակական տվյալների հավաքում, գրանցում, ամփոփում, հետադարձ կապ, վերլուծական հաշվետվություն և գնահատման աշխատանքների կառավարում:*

(«Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ուսուցչի ձեռնարկ Օ.Ս.Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան.-Եր: ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ, 80 էջ:)

64. Ի՞նչ հիմնական չափանիշներով կարելի է գնահատել բանավոր հարցումը:
- *Ակադեմիական գիտելիքի իմացություն:*
- *Կիրառելու կարողություն:*
- *Ներկայացնելու կարողություն:*
- *Ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն:*
- *Միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:*

(«Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ուսուցչի ձեռնարկ Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան.-Եր: ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ., 80 էջ:)

65. Որո՞նք են գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրները:
- *Ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ:*
- *Մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ:*
- *Նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:*

(«Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ուսուցչի ձեռնարկ Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան.-Եր: ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ., 80 էջ:)

66. Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջներին համապատասխան, ի՞նչ տիպի և բնույթի գործնական աշխատանքներ են նախատեսվում:
- *Հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագործում աղյուսակների և գծապատկերների տեսքով:*
- *Մոդելների, ձևանմուշների և մանրակերտերի (մակետների) պատրաստում:*
- *Դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր (ստենդներ): տեսաֆիլմեր, էլեկտրոնային ներկայացումներ և այլն):*
- *Լաբորատոր աշխատանքների կատարում:*
- *Երևակայական փորձեր:*

(«Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ուսուցչի ձեռնարկ Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան.-Եր: ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ.. 80 էջ:)

67. Թեմատիկ աշխատանքի առաջադրանքները կարող են տրվել թեստերով, որոնցում ներառված են ծրագրում առկա տարաբնույթ առաջադրանքներ: Թվարկել դրանցից առնվազն 4-ը:
- *Պատասխանի ընդարձակ շարադրմամբ:*
- *Ճիշտ պատասխանի ընտրությամբ:*
- *Կարճ պատասխան պահանջող:*
- *Ապացուցում պահանջող:*
- *Գործնական, կիրառական նշանակություն ունեցող:*
- *Կառուցվածքի փոփոխություն պահանջող:*
- *Գծապատկերի կազմման պահանջով:*
- *Համապատասխանեցման պահանջով:*
- *Բաց թողածը լրացնելու պահանջով:*
- *Ստեղծագործական մոտեցում պահանջող:*
- *Կամ դրանց համադրմամբ:*

(«Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ուսուցչի ձեռնարկ Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան.-Եր: ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ., 80 էջ:)

68. Ի՞նչ ենք հասկանում ուսուցանող գնահատում ասելով:
- *Ուսուցանող գնահատումը սովորողի կրթական առաջընթացի նպատակով դասավանդման և ուսումնառության ընթացքին զուգակցվող որակական աշխատանքներն են:*

(«Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ուսուցչի ձեռնարկ Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան.-Եր: ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010 թ., 80 էջ:)

69. Աշխատանքի ի՞նչ տարատեսակներ են օգտագործվում ուսուցանող գնահատման իրականացման նպատակով: Թվարկել դրանցից առնվազն 4-ը:
- *Կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք:*
- *Բանավոր հարցում:*
- *Տնային առաջադրանք:*
- *Խմբային աշխատանք, համագործակցություն, նախագիծ:*
- *Ինքնուրույն կատարման ուսումնական առաջադրանք:*
- *Բաց հարցերով քննարկում:*
- *Ինքնագնահատում:*
- *Փոխադարձ գնահատում:*
- *Գործնական աշխատանք, կիրառություններ:*
- *Ռեֆերատ:*

(«Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ուսուցչի ձեռնարկ Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան.-Եր: ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ., 80 էջ:)

70. Ո՞րն է հայտորոշիչ ստուգման նպատակը:
- *Կրթության ոլորտում հայտորոշիչ ստուգման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները:*

(«Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ու-սուցչի ձեռնարկ Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան. Եր., ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ. 80 էջ:)

☞ 8

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 2*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Մ հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ

7 ☜

71. Որո՞նք են հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկությունները: Թվարկել դրանցից առնվազն 3-ը:
- *Կարճ ժամանակի համար է, արագ է,*
- *Որոշակի է,*
- *Արագ է ստուգվում և արժևորվում,*
- *Բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,*
- *Սովորողների մեծ մասի համար թեստը մատչելի է,*
- *Արդյունքները հեշտ վերլուծելի են,*
- *Արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ կարող ենք որոշել աշակերտների հետ հետագա անելիքները:*

(«Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ուսուցչի ձեռնարկ Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան.-Եր: ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ., 80 էջ:)

72. Ո՞րն է մանկավարժական գիտության առարկան:
- *Մանկավարժությունը գիտություն է մարդկային անձնավորության դաստիարակության (ուսուցման, կրթության)՝ որպես մանկավարժական գործընթացի, օրինաչափությունների մասին:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ).

73. Ինչպիսի՞ ենթաճյուղերի է բաժանվում տարիքային մանկավարժությունը.
- *Մինչնախադպրոցական մանկավարժություն. ուսումնասիրում է մինչև երեք տարեկան երեխաների դաստիարակության հարցերը մսուր-մանկապարտեզում,*
- *Նախադպրոցական մանկավարժություն. ուսումնասիրում է երեխաների դաստիարակության առանձնահատկությունները մանկապարտեզում,*
- *Դպրոցական մանկավարժություն. ուսումնասիրում է դաստիարակության օրինաչափությունները հանրակրթական դպրոցներում:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

74. Որո՞նք են հատուկ մանկավարժության ենթաճյուղերը:
- *Օլիգոֆրենոմանկավարժություն - մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների ուսուցում և դաստիարակություն:*
- *Տիֆլոմանկավարժություն - կույր և վատ տեսնող երեխաների ուսուցում և դաստիարակություն:*
- *Սուրդոմանկավարժություն - խուլ և համր երեխաների ուսուցում և դաստիարակություն:*
- *Լոգոպեդիա - խոսքի խնդիրների վերացման մանկավարժություն:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

75. Ինչպիսի՞ տարիքային շրջաբաժանում է ընդունված ժամանակակից մանկավարժության մեջ:
- *Մանկիկային շրջան - մինչև մեկ տարեկան:*
- *Մինչնախադպրոցական շրջան - մեկից երեք տարեկան:*
- *Նախադպրոցական - երեքից վեց տարեկան:*
  - *կրտսեր նախադպրոցական (3-4 տարեկան):*
  - *միջին նախադպրոցական (4-5 տարեկան):*
  - *ավագ նախադպրոցական (5-6 տարեկան):*
- *Դպրոցական:*
  - *կրտսեր (6-10 տարեկան):*
  - *միջին (10-15 տարեկան):*
  - *ավագ (15-18 տարեկան):*

(Ղուլումչյան Գ. Ե. «/Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

76. Ի՞նչ է նշանակում անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը:
- *Մտավոր, ֆիզիկական, աշխատանքային, բարոյական և գեղագիտական դաստիարակությունների միասնությունը:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար:Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

77. Որո՞նք են անձի մտավոր դաստիարակության խնդիրները:
- *Անձին՝ մարդկության կողմից ստեղծված մշակութային արժեքներին, գիտելիքներին ու փորձին ծանոթացումն է, ինչպես նաև նրա աշխարհայացքի ձևավորումը:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար:Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

78. Ո՞ր տարիքն է առավել զգայուն մտավոր զարգացման համար:
- *Կրտսեր դպրոցական տարիքը:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

79. Որո՞նք են անձի բարոյական դաստիարակության խնդիրները:
- *Մարդու բարոյական գիտակցության ձևավորումն է:*
- *Բարոյական զգացմունքների դաստիարակումն է:*
- *Անձնավորության բարոյական վարքագծի ձևավորումն է:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

80. Որո՞նք են անձի աշխատանքային դաստիարակության խնդիրները:
- *Աշխատանքի հանդեպ ճիշտ վերաբերմունք դաստիարակելը և աշխատանքին հոգեբանորեն նախապատրաստելն է:*
- *Աշխատանքին գործնականապես պատրաստելն է:*
- *Մասնագիտական կողմնորոշումն է:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

81. Որո՞նք են անձի գեղագիտական դաստիարակության խնդիրները:
- *Գեղագիտական գիտակցության ձևավորում:*
- *Գեղարվեստական ճաշակի ձևավորում:*
- *Գեղեցիկի ոլորտում դրսևորվելու և այն ստեղծելու կարողությունների ձևավորում:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

82. Որո՞նք են անձի ֆիզիկական դաստիարակության խնդիրները:
- *Առողջարարական՝ առողջության ամրապնդում, օրգանիզմի ձևի և ֆունկցիաների ներդաշնակ զարգացում, շարժողական որակների և ճիշտ կեցվածքի ձևավորում:*
- *Կրթական՝ կենցաղում, աշխատանքում և պաշտպանական գործունեության ընթացքում ֆիզիկական կուլտուրայի միջոցների մասին գիտելիքներով զինում:*
- *Դաստիարակչական՝ բարձր կամային որակների ձևավորում:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

83. Որո՞նք են մանկավարժական գործընթացի հատկանիշները: Նշել առնվազն 4-ը:
- *Մանկավարժական գործընթացը անձնավորության զարգացման և ձևավորման հատուկ կազմակերպված, պլանավորված, նպատակասլաց և մասնագիտական կազմակերպում պահանջող գործընթաց է:*
- *Մանկավարժական գործընթացի էությունը անձնավորության զարգացումն ու ձևավորումն է, նրա կատարելագործումը:*
- *Մանկավարժական գործընթացը երկկողմանի է, այն իրականացվում է դաստիարակ-սան ուղղակի համագործակցության ընթացքում:*
- *Սանը դաստիարակության սուբյեկտ է, մասնակցում է մանկավարժական գործընթացի կազմակերպմանը:*
- *Մանկավարժական գործընթացի առանձնահատկություններից մեկն էլ անձնավորության սոցիալիզացման արագացման գործառույթն է:*
- *Մանկավարժական գործընթացը կազմակերպչական և բովանդակային բարդ համակարգ է, նրա բոլոր ենթահամակարգերը գտնվում են սերտ կապի և միասնության մեջ:*
- *Մանկավարժական գործընթացը չի նույնանում մանկավարժական գործունեության հետ, վերջինս մանկավարժական գործընթացի կարևոր, առաջատար կողմն ու միջոցն է:*
- *Մանկավարժական գործընթացի մյուս կարևոր կողմը սանի, սովորողի, աշակերտի գործունեությունն է:*

(Ղուլումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար:Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

84. Որո՞նք են մանկավարժական գործընթացի փուլերը:
- *Նախապատրաստական փուլ:*
- *Մանկավարժական գործընթացի իրականացման, լուծման, կազմակերպման փուլ:*
- *Արդյունքների վերլուծության փուլ, սխալների հայտնաբերման և բնութագրման փուլ:*
- *Սխալների ուղղման կամ շտկման փուլ:*

(Ղուլումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն»: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: «Զանգակ-97», 2005թ.)

85. Որո՞նք են կրթության բովանդակության մակարդակները:
- *Մշակված բովանդակություն (չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր):*
- *Հաղորդվող բովանդակություն (ուսումնական գործընթաց):*
- *Յուրացվող բովանդակություն (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, արժեքներ):*

(Ա. Արնաուդյան, Ա.Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ.Պետրոսյան /«Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար»/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ.)

86. Կրթության բովանդակության ո՞ր մասի համար է պատասխանատու ուսուցիչը:
- *Յուրացվող բովանդակության (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, արժեքներ):*

(Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ. Պետրոսյան /«Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար»/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ.)

87. Կրթության բովանդակության ո՞ր մասի իրականացմանն է մասնակցում ուսուցիչը:
- *Հաղորդվող բովանդակության (ուսումնական գործընթաց):*

(Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ. Պետրոսյան / «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար»/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ.)

88. Սովորողների կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորման համար ուսուցիչը պետք է՝
- *Ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ:*
- *Գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունն ու դրանցում իր մասնակցության կարևորությունը:*
- *Հրաժարվի ժամանակավրեպ գործելակերպից:*
- *Կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները:*
- *Մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:*

(Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ. Պետրոսյան /«Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար»/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.)

89. Ինչպիսի՞ կարողություններ պետք է ունենա ուսուցիչը:
- *Իր աշխատանքը ծրագրելու:*
- *Ուսումնական գործընթացն արդյունավետ իրականացնելու:*
- *Գնահատելու:*
- *Անդրադարձ (ռեֆլեքսիա) կատարելու:*
- *Մասնագիտական զարգացման:*

(Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ. Պետրոսյան / «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար»/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ.)

90. Ուսուցիչը հանդիսանում է՝
- *որպես դասավանդող,*
- *որպես ուսուցման կազմակերպիչ,*
- *որպես մանկավարժական հաղորդակցման գործընկեր,*
- *որպես ուսուցման աջակից և խթանող,*
- *որպես գնահատող,*
- *որպես սովորողի ճանաչողական ներուժը բացահայտող,*
- *որպես սոցիալական հարաբերություններ համակարգող,*
- *որպես հոգեբան:*

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

*Հավելված 2*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Մ հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ

(Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ. Պետրոսյան, «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար»/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004թ.)

91. Ի՞նչ պետք է հաշվի առնել դասացուցակ կազմելիս:

- Դասացուցակները կազմելիս հաշվի է առնվում դասաժամերի օպտիմալ հարաբերակցությունը, ինչպես նաև օրվա և շաբաթվա ընթացքում ուսումնական առարկաների ճիշտ հաջորդականությունը՝ բնական, մաթեմատիկական և հումանիտար առարկաների դասաժամերը երգի, նկարչության և ֆիզիկական դաստիարակման դասաժամերին, ինչի շնորհիվ ստեղծվում է աշակերտների մտավոր գործունեությունից ֆիզիկականի փոխվելու հնարավորություն:

*- Տարբեր առարկաների ճիշտ զուգակցումը ուսումնական օրվա ընթացքում ապահովում է աշակերտների աշխատունակության պահպանման բարձր մակարդակը մինչև դասերի ավարտը:*

(«Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ», N 2.III.4-2…մաս 10.կետ 75)

92. Դասաժամերի կառուցվածքին ի՞նչ հիգիենիկ պահանջներ են ներկայացվում:

*- Պարապմունքների ընթացքում անհրաժեշտ է ստեղծել կարճատև դադարներ՝ երեխաների մկանային ստատիկ լարվածության վերացման և մտավոր աշխատունակության բարձրացման նպատակով:*

*- Ուսումնական բեռնվածությունը աստիճանաբար ավելանալով դասաժամի կեսին պետք է հասնի առավելագույնի և իջնի դասաժամի ավարտին:*

*Այդ պահանջներին համապատասխանում է հետևյալ ստանդարտ սխեման. տվյալ դեպքում դասը պայմանականորեն կիսվում է երեք մասի՝ ներածական, հիմնական և ավարտական:*

*Ներածական մասը ուսուցիչն օգտագործում է դասահարցման և կազմակերպչական միջոցառումների համար, հիմնականը՝ նոր դասի, նյութի շարադրման համար, ավարտականը՝ վարժեցման, վերարտադրման համար:*

*Առավել դժվար առարկաները դասացուցակում ներառվում են 2-րդ և 3-րդ դասաժամերին՝ աշակերտների ամենաբարձր աշխատունակության ժամանակ:*

*Բարդ առարկաները (ֆիզիկա, մաթեմատիկա, օտար լեզու) հարկ է զուգակցել հեշտ ընկալվող առարկաների հետ՝ պատմություն, աշխարհագրություն և այլն:*

(«Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ» N 2.III.4-2…մաս 10.կետ 76)

93. Կրթության ոլորտում զբաղված ո՞ր անձինք են ենթակա պարտադիր բժշկական զննության:

*- Քոլեջների, ուսումնարանների, հանրակրթական դպրոցների սաները, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, ովքեր արտադրական պրակտիկա են անցնում այն հաստատություններում, որոնց աշխատողները ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության (հետազոտությունների):*

*- Ուսումնադաստիարակչական հիմնարկների (բուհեր, հանրակրթական դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, մարզադպրոցներ, ուսումնարաններ, նախամասնագիտական և մասնագիտական կրթության կազմակերպություններ, արվեստի դպրոցներ, համակարգչային ուսուցման դասընթացներ) աշխատողները, ովքեր առնչվում են ուսումնադաստիարակչական աշխատանքներին:*

*- Մանկական նախադպրոցական հիմնարկների (մանկամսուր, մանկապարտեզ և այլն, հատուկ ուսումնական կրթական հիմնարկ), մանկատների, երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունների, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների աշխատողները, ովքեր անմիջապես իրականացնում են երեխաների, բուժվողների, հանգստացողների սպասարկումը:*

*- Դպրոցականների ամառային առողջարարական ճամբարների և այլ առողջարանային մանկական զվարճանքի կազմակերպությունների աշխատողները, ովքեր ընդգրկված են սպասարկման ոլորտում:*

(«ԼՂՀ կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի N 396 -Ն որոշում», Հավելված 2, կետեր 4, 9, 11, 12)

94. Ի՞նչ հաճախականությամբ է իրականացվում ուսումնադաստիարակչական հիմնարկների աշխատողների պարտադիր բժշկական զննությունը:

*- Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարեկան մեկ անգամ:*

(«ԼՂՀ կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի N 396 -Ն որոշում», Հավելված 2., կետ 9)

95. Ի՞նչ ընթացակարգ է սահմանված այն անձանց համար, ովքեր չեն ենթարկվել նախնական և պարբերական զննության, ինչպես նաև եթե բժշկական զննության արդյունքում ախտորոշվել է վարակիչ հիվանդություններից որևէ մեկը:

*- Այն անձինք, ովքեր չեն ենթարկվել նախնական և պարբերական բժշկական զննության, ինչպես նաև, եթե բժշկական զննության արդյունքում ախտորոշվել է վարակիչ հիվանդություններից որևէ մեկը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմնի պետի որոշմամբ չեն թույլատրվում աշխատանքի՝ մինչև սահմանված կարգով բժշկական զննության ենթարկվելը, իսկ հիվանդության դեպքում՝ մինչև առողջացումը:*

(«ԼՂՀ կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի N 396 -Ն որոշում», Հավելված 1., կետ 20)

96. Ամենամյա ինչպիսի՞ արձակուրդ է տրամադրվում հանրակրթական հիմնական ընդհանուր, հատուկ և մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատողներին:

*- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի որոշմամբ հանրակարթական հիմնական ընդհանուր, հատուկ և մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատողներին տրամադրվում է ամենամյա երկարացված արձակուրդ:*

(«ԼՂՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 29-ի N 496-Ն որոշում»)

97. Հանրակրթական հիմնական ընդհանուր, հատուկ և մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ո՞ր պաշտոնները զբաղեցնող աշխատողներին է տրամադրվում ամենամյա երկարացված արձակուրդը:

*- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի որոշմամբ հանրակարթական հիմնական ընդհանուր, հատուկ և մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հետևյալ պաշտոններր զբաղեցնող աշխատողներին տրամադրվում է ամենամյա երկարացված արձակուրդը. Թվարկել առնվազն 4 պաշտոն:*

1. *Հաստատության ղեկավար*
2. *Ղեկավարի տեղակալ*
3. *Ստորաբաժանման ղեկավար*
4. *Դասավանդող (ուսուցիչ, ուսուցիչ-դաստիարակ)*
5. *Հոգեբան*
6. *Արատաբան*
7. *Զինվորական ղեկավար (զինղեկ)*
8. *Երեխաների խնամքի աշխատող*
9. *Սոցիալական մանկավարժ*

(«ԼՂՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 29-ի N 496-Ն որոշում»)

98. Որքա՞ն է սահմանված հանրակրթական հիմնական ընդհանուր, հատուկ և մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատողների ամենամյա արձակուրդի տևողությունը:

*- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի որոշմամբ հանրակարթական հիմնական ընդհանուր, հատուկ և մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատողների ամենամյա արձակուրդի տևողությունը սահմանված է հետևյալ կերպ.*

*հնգօրյա աշխատանքային ռեժիմով աշխատողների համար՝ 35 օր,*

*վեցօրյա աշխատանքային ռեժիմով աշխատողների համար՝ 42 օր:*

(«ԼՂՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 29-ի N 496-Ն որոշում»)

99. Ինչպիսի՞ լուսավորություն պետք է ունենան համակարգչային դասարանները, աշխատասենյակները, խաղային և ինտերնետ սրահները:

*- Համակարգչային դասարանները, աշխատասենյակները, խաղային և ինտերնետ սրահները պետք է ունենան բնական և արհեստական լուսավորություն:*

(«Համակարգիչներին և դրանցից օգտվողների աշխատանքի կազմակերպմանը ու պայմաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ սանիտարական կանոններ և նորմեր», N 2.III-4.10- (բաժին 3, կետ 3.1)

100. Որքա՞ն պետք է լինի մոնիտորի էկրանից մինչև համակարգչով աշխատող անձի աչքերը հեռավորությունը:

*- Մոնիտորի էկրանից մինչև համակարգչով աշխատող անձի աչքերը առաջարկվում է 600-700 մմ հեռավորություն, բայց ոչ պակաս 500 մմ-ից՝ հաշվի առնելով այբբենաթվային նշանների և խորհրդանիշների չափերը:*

(«Համակարգիչներին և դրանցից օգտվողների աշխատանքի կազմակերպմանը ու պայմաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ Սանիտարական կանոններ և նորմեր», N 2.III-4.10-( բաժին 3, կետ3.9)

### Օգտագործված փաստաթղթերի և գրականության ցանկ

1. «ԼՂՀ Սահմանադրություն»:
2. «Կրթության մասին ԼՂՀ օրենք»:
3. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ԼՂՀ օրենք»:
4. «ԼՂՀ Քաղաքացիական օրենսգիրք»:
5. «ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»:
6. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգիրք»:
7. «Հանրակրթության մասին ԼՂՀ օրենք»:
8. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ԼՂՀ օրենք»:
9. «Լեզվի մասին ԼՂՀ օրենք»:
10. «Երեխայի իրավունքների մասին ԼՂՀ օրենք»:
11. «Իրավական ակտերի մասին ԼՂՀ օրենք»:
12. «Տեղական ինքնակառավարման մասին ԼՂՀ օրենք»:
13. «Նախադպրոցական կրթության մասին ԼՂՀ օրենք»:
14. «Կրթության պետական տեսչության մասին ԼՂՀ»: օրենք:
15. ԼՂՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչության կանոնադրություն:
16. «ԼՂՀ պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն»:
17. «ԼՂՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝խորհրդի ձևավորման կարգ»:
18. «Հանրակրթական ուսումնական հաստատության ու սուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգ 19. Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ»:
20. «Լեռնային Ղաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ»:
21. «Հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններ»:
22. «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ N 2.III.4-2...»:

### Մանկավարժություն և հոգեբանություն

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար»/ - Եր.; Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004, 180 էջ:
2. Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /«Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն»/, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, 2008թ.:
3. Գրիգորյան Յու., Մինասյան Հ. /«Հանրակրթական դպրոցի ֆիզիկական կուլտուրայի առարկայի չափորոշիչ և ծրագիր 1-12-րդ դասարաններ»/, ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան 2007թ.:
4. Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., էլոյան Ն., Շահրոքի Ֆ. /«Դպրոցի ղեկավարում և կառավարում; Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար», ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ, 296 էջ:
5. Հանրակրթության պետական չափորոշիչ (նոր խմբագրությամբ՝ 1088-Ն, 28.07.2011թ.):
6. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. /«Համագործակցային ուսուցում», Ձեռնարկ / - Եր.; Անտարես, 2006 թ., 124 էջ:
7. Ղույումչյան Գ. Ե. /«Մանկավարժություն», Դասագիրք բուհերի համար; Երկու գրքով, Գիրք 1, Գիրք 11 /- Եր.; «Զանգակ-97», 2005թ., 464 էջ:
8. Նալչաջյան Ա., «Հոգեբանության հիմունքներ», Երևան. «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ:
10. Մ.Ա. Մկրտչյան /«Կոլեկտիվ ուսուցման տարրերը», Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար /Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, «Բյուրակն» կրթական համալիր, Երևան, 2009թ.:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 3*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Ս հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ

## ՀԱՐՑԱՇԱՐ

1. Նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեությունն է:
*- Խաղը:*

(Հիմք՝ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Վ.Պետրովսկու խմբագրությամբ, Ա. Ա. Նալչաջյանի թարգմանությամբ, «Լույս» հրատարակչություն, 1977թ.:)

2. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթական հաստատության դաստիարակի պարտականությունը:
*- Պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը:*

(Հիմք՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը նախադպրոցական կրթության մասին», սեպտեմբերի 27, 2006թ., գլուխ 1:)

3. Ինտերակտիվ՝ թարգմանաբար նշանակում է:
*- Փոխգործուն:*

(Հիմք՝ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004թ.:)

4. Նշված հանրակրթական հիմնական ծրագրերից ո՞րը պարտադիր չէ:
*- Նախադպրոցական կրթական ծրագիրը:*

Հիմք՝ «Կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 16:

5. Նշե՛ք «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենքի գործողության շրջանակները:
*- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչև 18 տարեկան անձանց վրա:*

(Հիմք՝ «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 1:)

6. Տարվա կտրվածքով մանկապարտեզի կրթադաստիարակչական աշխատանքները կարգավորող փաստաթուղթ:
*- Տարեկան աշխատանքային պլան:*

(Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ՀՀ ԿԳՆ, 2010թ.- 21.01 N05-Ա/Ք հրաման:)

7. «Լեզվի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն:
*- Գրական հայերենն է:*

(Հիմք՝ «Լեզվի մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 2:)

8. ԳՈՒՍ նշանակում է՝
*- գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի:*

(Հիմք՝ Երեխայակենտրոն դասասենյակների ստեղծումը 3, 4 և 5 տարեկան երեխաների համար, «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ, Երևան, 2004թ.:)

9. Նշվածներից ո՞րը երեխայի հիմնական իրավունքը չէ:
*- Երեխայի ընտրելու իրավունքը:*

(Հիմք՝ «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք:)

10. Դաստիարակի թղթապանակի համար անհրաժեշտ փաստաթղթեր՝
*- Պլանավորման և հաշվառման տետր, ինքնակրթության տետր, ծնողական ժողովների արձանագրությունների տետր*

(Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ՀՀ ԿԳՆ, 2010թ, 21.01 N05-Ա/Ք հրաման:)

11. Աշխատանքային պայմանագիր կնքելիս կողմերի միջև փորձաշրջան կարող է սահմանվել
(նշե՛ք սխալ պատասխանը)
*- եթե աշխատանքի են ընդունվում ընտրովի պաշտոն զբաղեցնողները, ինչպես նաև պաշտոնի նշանակման համար որակավորման քննություններ հանձնած անձինք:*

(Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 91:)

12. ԽԻԿ նշանակում է՝
*- Խթանում, իմաստի ընկալում, կշռադատում:*

(Հիմք՝ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004թ.:)

13. ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը
(նշե՛ք սխալ պատասխանը):
*- Աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում:*

(Հիմք՝ ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, Հոդված 113:)

14. Դաստիարակի աշխատանքի պլանավորման հիմնական բաղադրիչներն են՝
*- Մարմնամարզություն, դիտում, աշխատանք, խաղ, պարապմունք, աշխատանք ծնողների հետ, անհատական աշխատանք*

(Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ՀՀ ԿԳՆ, 2010թ. 21.01 N05-Ա/Ք հրաման:)

15. «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն մինչև ո՞ր տարիքն է համարվում նախադպրոցական տարիք:
*- Մինչև 6 տարեկանը:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 2:)

16. Գրաճանաչության, մաթեմատիկայի, արվեստի, շինարարության, խոհարարության, դերային խաղի, բնագիտության, տեխնիկական, սպորտի կենտրոնները միասին կոչվում են.
*- Զարգացնող միջավայր:*

(Հիմք՝ Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ, Երևան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2011թ.:)

17. Աշխատանքային կարգապահության խախտում համարվում է՝
*- աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատաճ կատարելը:*

(Հիմք՝ ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 220:)

18. Մանկապարտեզում պարապմունքներն անցկացվում են՝
- շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի (կանոնակարգի) համաձայն:

(Հիմք՝ Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2010թ.:)

19. Ո՞ր ժամերին և ում հաշվին է կատարվում պարտադիր բժշկական զննումը:
*- Աշխատանքային ժամերին՝ գործատուի հաշվին:*

(Հիմք՝ ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, Հոդված 249, կետ 6:)

20. Նախադպրոցականի մտավոր զարգացման և դաստիարակության հիմքը հանդիսանում է՝
*- զգայական դաստիարակությունը;*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», ՀՀ ԿԳՆ, 27.10.2011թ N 1192-Ա/Ք հրաման:)

21. Ներքոնշյալներից ո՞րը «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություն չէ:
*- Նախադպրոցական կրթության նպատակը:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 2:)

22. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության ոլորտում ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների իրավունք:
*- Մասնակցել նախադպրոցական կրթության գործընթացին:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 28:)

23. Այս երևույթը բնութագրվում է աճող սերնդի հոգեկան գործընթացների առավել ինտենսիվ զարգացմամբ (արագընթաց ֆիզիկական և սեռային հասունացում, տեղեկատվական հոսքի կտրուկ ավելացում…):
*- Աքսելերացիա:*

(Հիմք՝ Ս. Մարության, Ա.Դալլաքյան - «Նախադպրոցական մանկավարժություն», 2005, ուսումնական ձեռնարկ:)

24. Մտագրոհը համարվում է՝
*- Փոխգործուն մեթոդ:*

(Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ՀՀ ԿԳՆ, 2010թ.- 21.01 N05-Ա/Ք հրաման:)

25. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում օդային բարվոք միջավայր ստեղծելու համար իրականացվող օդափոխությունը դադարեցվում է երեխաների խմբասենյակ վերադառնալուց:
*- 30 րոպե առաջ:*

(Հիմք՝ Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) սանիտարական նորմեր և կանոններ (Հաստատված է ԼՂՀ առողջապահության նախարարի 2008թ. հոկտեմբերի 13-ի թիվ 135-Ն հրամանով):)

26. Ուսուցման այդ սկզբունքներն ապահովում են երեխայի զարգացումը, տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը և համարվում են՝
*- ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայի հիմնարար սկզբունքներ:*

(Հիմք՝ «Նախադպրոցական մանկավարժություն», 2005թ., ուսումնական ձեռնարկ:)

27. Նախադպրոցական կազմակերպությունների հիմնական շինությունները պետք է ունենան՝
*- անմիջական բնական լուսավորում:*

(Հիմք՝ Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) սանիտարական նորմեր և կանոններ (Հաստատված է ԼՂՀ առողջապահության նախարարի 2008թ. հոկտեմբերի 13-ի թիվ 135-Ն հրամանով):

28. Ձախլիկությունը զարգացման առանձնահատկություն է, որը պայմանավորված է՝
*- ուղեղի կիսագնդերի գործունեությամբ:*

(Հիմք՝ «Ձախլիկների զարմանահրաշ աշխարհը», Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009թ.:)

29. Նախադպրոցական ուսումնական հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են՝
*- հաստատության և ծնողների միջև կնքվող պայմանագրով:*

(Հիմք՝ « ԼՂՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, գլուխ IV, կետ 26:)

30. Լոգոպեդական խաղերը միտված են՝
*- երեխաների խոսքի շտկողական աշխատանքների իրականացմանը:*

(Հիմք՝ «Լոգոպեդական խաղեր», ՀՀ ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտ 2009թ.:)

31. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակը.
*- դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 6:)

32. Մատների վարժությունները նպաստում են հոգեկան գործընթացներից՝
*- ուշադրության, հիշողության զարգացմանը:*

(Հիմք՝ «Հրաշք մատիկներ», Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, 2010թ.:)

33. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակ:
*- Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 6:)

34. Բառի հնչյունային վերլուծություն կատարելու կարողության խնդիրը համարվում է՝
*- գրաճանաչության նախապատրաստման կարևորագույն խնդիր:*

(Հիմք՝ «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», մեթոդական ձեռնարկ, Երևան, 2007թ.:)

35. Ո՞ր մարմինն է սահմանում նախադպրոցական ուսումնական հաստատության խմբերի խտությունը.
*- կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 10:)

36. Երեխայի մտածողությունը խթանող հարցերը կոչվում են՝
*- բաց հարցեր:*

(Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ՀՀ ԿԳՆ, 2010թ-. 21.01 N05-Ա/Ք հրաման: )

37. Ո՞րն է նախադպրոցական կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի լիազորությունը:
*- Մշակում, հաստատում և ներդնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 16:)

38. Ուսուցման այդ ձևը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով:
*- Թեմատիկ ուսուցում:*

(Հիմք՝ «Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը», Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2010թ.:)

39. Ո՞րն է նախադպրոցական կրթության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունը:
*- Ապահովում է նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 17:)

40. Բառերի բոլոր հնչյունների ճիշտ արտասանությունը, տրամաբանական շեշտերի տեղին օգտագործումը, ձայնի ուժի և խոսքի տեմպի կարգավորումն ապահովում են մայրենի լեզվի ուսուցման կարևորագույն խնդիրներից՝
*- հնչարտաբերական ունակությունների զարգացումը:*

(Հիմք՝ Ս. Բաղդասարյան, «Ճիշտ արտասանության ձևավորումը նախադպրոցական տարիքում», 1988թ.:)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 3*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Ա հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ

## ՀԱՐՑԱՇԱՐ

41. Ո՞ր նորմատիվ փաստաթղթով է սահմանվում նախադպրոցական կրթության բովանդակությունը.
*- նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 21:)

42. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակ.
*- երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 6:)

43. Այդ խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացումն է, և դրանք հիմնականում անց են կացվում դաստիարակի ղեկավարությամբ` հստակ կազմակերպված պարապմունքների միջոցով.
*- դիդակտիկ խաղեր:*

(Հիմք` Մայրենի լեզվի դիդակտիկ խաղեր, Երևան, 2007թ.:)

44. Նախադպրոցական կրթական հաստատություններում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն`
*- նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:*

(Հիմք` «ԼՂՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություն, գլուխ IV, կետ 28:)

45. ԲՄՏ նշանակում է`
*- բազմաբնույթ մտածողության տեսություն:*

(Հիմք` «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումն ուսուցման վաղ շրջանում», Այռեքս, Երևան, 2004թ.:)

46. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք իրավունք ունեն կրթական ծրագրերին, իրենց զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան ստանալու`
(նշե՛ք սխալ պատասխանը)
*- նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն և հետբուհական մասնագիտական, հիմնական և լրացուցիչ կրթություն համապատասխան ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով:*

(Հիմք` «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 6, կետ 2:)

47. Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարների և մանկավարժների ատեստավորումը կազմակերպվում է`
*- հինգ տարին մեկ:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք հոդված 25, երրորդ պարբերություն:)

48. Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի երկարացված` մինչև 35 օր տևողությամբ (բացառիկ դեպքերում մինչև 48 օր տևողությամբ) ամենամյա արձակուրդի իրավունք ունեն`
(նշե՛ք սխալ պատասխանը)
*- մատենադարանների, գրադարանների տնօրենները, փոխտնօրենները, գրադարանավարները, մատենագետները:*

(Հիմք` ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, Հոդված 160:)

49. Վաղ տարիքում երեխան շրջապատող աշխարհի հետ ծանոթանում է`
*- զգայարանների միջոցով:*
( Հիմք` «Այնքան ծանոթ և այնքան անծանոթ… մեր երեխան», Ձեռնարկ ծնողների համար, ՄԱԿ-ի գրասենյակ, «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ, Երևան, 2006թ.:)

50. ՆՈՒՀ-ում ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքը կազմակերպում և վերլուծում է`
*- մեթոդիստը` տնօրենի ուսումնական գծով տեղակալը:*

(Հիմք` ՀՀ ԿԳՆ 2011 թվականի 26 ապրիլի N416-Ն հրաման, III բաժին:)

51. Ի՞նչ է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը.
*- կրթադաստիարակչական հիմնական ծրագրերի, նպատակների իրագործումը ցույց տվող ցուցանիշների կատարման ընդունված մակարդակն է:*

(Հիմք` Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ, ԼՂՀ ԿԳՆ հր. N 113, 13.06.11թ.:)

52. Դաստիարակի պարտականություններից են`
*- պլանավորումը և սաների ուսուցումն ու դաստիարակությունը:*

(Հիմք` Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց: )

53. Օրական քանի՞ պարապմունք են անցկացնում ավագ խմբում:
*- 15+1:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

54. Ո՞ր ռեժիմային պահից հետո են անցկացնում պարապմունքները:
*- Նախաճաշից հետո:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ.:)

55. Տարվա ընթացքում գրաճանաչությունից քանի՞ պարապմունք է նախատեսվում ավագ խմբում`
*- 40:*

(Հիմք` Վաղ գրաճանաչությունը ավագ խմբում, 2007թ. Երևան:)

56. Գրաճանաչության պարապմունքները քանի՞ րոպե տևողությամբ են անցկացվում ավագ խմբում:
*- 25 - 30 րոպե:*

(Հիմք` «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ. Երևան:)

57. Մանկապարտեզի երեխաները սովորու՞մ են գրել տառերը:
*- Միացնում են ուրվագծերն ու ներկում:*

(Հիմք` «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ. Երևան:)

58. Գրաճանաչության պարապմունքի առաջնահերթ խնդիրներից մեկը`
*- բառի հնչյունային վերլուծությունը:*

(Հիմք` «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ. Երևան:)

59.Դաստիարակի աշխատանքային օրը քանի՞ ռեժիմային պահերից է բաղկացած.
*- ընդունելություն, առավոտյան մարմնամարզություն, նախաճաշ, պարապմունքներ, զբոսանք, քուն, հետճաշիկ, խաղ-զվարճալիք, տունճանապարհում:*

(Հիմք` «Նախադպրոցական հաստատության կառավարումը», 2008թ. Երևան:)

60. Դաստիարակի օգնականի աշխատանքային պարտականություններից են.
*- պահպանել սենյակների մաքրությունը, օգնել դաստիարակին, կատարել նրա հանձնարարությունները:*

(Հիմք` «Նախադպրոցական տարիքի երեխաների հիգիենա», Բ. Անջելյան, 1978թ.,Երևան:)

61. Խմբերի խտությունը ըստ տարիքային առանձնահատկությունների` մինչև 1,1-3 տ., 3-6տ.:
*- մինչև 1տ.` 10-15, 1- 3 տ.` 15-20, 3-6տ. ` 25-30:*

(Հիմք` ԼՂՀ ԿԳՆ նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի հաստիքացուցակ, 2007թ.:)

62. Ի՞նչ է ընդգրկվում դաստիարակի աշխատանքային պլանի մեջ`
*- օրվա ռեժիմային պահերը:*

(Հիմք` Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի աշխատանքային փաթեթ, մեթոդական ուղեցույց:)

63. Դաստիարակի օգնականը իրավունք ունի՞ պարապմունք անցկացնել:
*- Ոչ:*

(Հիմք` Դաստիարակի օգնականի աշխատանքային պարտականությունները:)

64. Դաստիարակը պատասխանատու՞ է երեխաների առողջության համար:
*- Այո. բժշկական աշխատողների հետ համատեղ ապահովում է երեխաների առողջության ապահովումը:*

(Հիմք` Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:)

65. Ինչպե՞ս վարվել կամակոր երեխայի հետ:
*- Ուսումնասիրել երեխայի անհատական առանձնահատկությունները, օգտագործելով բացատրական-համոզիչ մեթոդը:*

(Հիմք` Նախադպրոցականի դաստիարակության հարցեր, Ա. Հովհաննիսյան, 2005թ.Երևան:)

66. Ծնողների հետ աշխատանքի ի՞նչ ձևեր կան:
*- Ծնողական անկյուն, ծնողական ժողով, անհատական զրույց, ծնողների հետ սեմինարներ, այցելություն տներ, աշխատանք ծնողական կոմիտեի հետ:*

(Հիմք` Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:)

67. Ո՞վ է վարում երեխաների հաճախումների մատյանը:
*- Դաստիարակը:*

(Հիմք` Դաստիարակի աշխատանքային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:)

68. Ձմռանը երեխաներին տանո՞ւմ են զբոսանքի:
*- Այո:*

(Հիմք` «Նախադպրոցական տարիքի հիգիենան», Բ. Անջելյան, 1978թ. Երևան:)

69. Ո՞վ է անցկացնում օրինակելի պարապմունքը:
*- Դաստիարակը:*

(Հիմք` Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:)

70. Ավագ խմբում խոսքի զարգացումից և գրաճանաչությունից քանի՞ պարապմունք է նախատեսվում շաբաթվա ընթացքում:
*- 4:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

71. Երեխայի բարեկիրթ վարքի կուլտուրայի դաստիարակման համար լավագույն միջոցը ո՞րն է:
*- Բարոյագիտական զրույցները:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

72. Ինչպիսի՞ մեթոդներով ու միջոցներով հասնել երեխաների էկոլոգիական դաստիարակությանը:
*- Դիտումների, էքսկուրսիաների, զբոսանքների, նկարչության, ծեփի պարապմունքների, բանաստեղծությունների, երգերի, հեքիաթի ընթերցումների, էկոլոգիական խաղերի միջոցով:*

(Հիմք` «Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում», 2007թ. Երևան:)

73. Ֆիզդաստիարակության խնդիրները.
*- առողջության պահպանում և ամրապնդում, օրգանիզմի կոփում, ճիշտ կեցվածքի ձևավորում, բարոյականային հատկանիշների որակական գծերի դաստիարակում, ֆիզիկական որակների ձևավորում:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

74. Օրվա ընթացքում դաստիարակը ինչքա՞ն ժամանակ պետք է հատկացնի շարժական խաղերին:
*- 30 րոպեից ոչ պակաս:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

75. Որո՞նք են ֆիզդաստիարակության հիմնական շարժումները մանկապարտեզում:
*- Քայլ, վազք, ցատկ, նետում, մագլցում, սողանցում, հավասարակշռություն:*

( Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

76. Նկարչության պարապմունքների նպատակը.
*- շրջապատող առարկայական աշխարհի ու երևույթների պատկերումն է երանգավորման և գրաֆիկական եղանակով:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

77. Գեղագիտական դաստիարակության կազմակերպման ինչպիսի՞ ձևեր կան:
*- Խաղ-պարապմունքներ, պարապմունքներ, վիկտորինաներ, տոնահանդեսներ, էքսկուրսիաներ:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

78. Ինչպիսի՞ կերպարվեստային պարապմունքներ են անցկացվում մանկապարտեզում:
*- Նկարչության, ծեփի, ապլիկացիայի, կառուցողական աշխատանքի:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

79. Ի՞նչ է խաղը երեխայի կյանքում:
*- Խաղը ինքնագնահատման, ինքնաճանաչման ասպարեզ է, որը հնարավորություն է տալիս դրսևորել նախաձեռնություն, ճարպկություն, կոլեկտիվ հարմարվողականություն:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

80. Ինչպիսի՞ խաղեր են կազմակերպվում մանկապարտեզում:
*- Սյուժետադերային, խաղ-բեմականացում, շարժախաղ, դիդակտիկ խաղ, ինտելեկտուալ խաղ, ազատ խաղ, խաղ զվարճալիքներ:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

81. Որո՞նք են աշխատանքային դաստիարակության ձևերը.
*- հանձնարարություններ, հերթապահություն, ընդհանուր աշխատանք, ինքնասպասարկում, առարկայական-գործնական աշխատանք, ձեռքի աշխատանք:*

☞12

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 3*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26 -ի N 169/Ս հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ

# ՀԱՐՑԱՇԱՐ

11 ☜

(Հիմք` «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ., Երևան:)

82. Ձեռքի աշխատանքների տեսակները.
*- կտորով, թելով, բնական նյութերով, ապլիկացիա, փայտով, կավով, արհեստական նյութերով:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ. Երևան:)

83. Ի՞նչ գրավիչ ժամանցներ գիտեք:
*- Մարզական զվարճություններ, տոնահանդեսներ:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ. Երևան:)

84. Ի՞նչ է պահանջում յուրաքանչյուր երեխա դաստիարակից:
*- Անհատական մոտեցում, հավասար իրավունքներ:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

85. Շաբաթական քանի՞ պարապմունք է անցկացվում 4-5 տարեկանների խմբում:
*- 12 պարապմունք:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

86. Վերադաս մարմիններից ստացված կանոնակարգը (ռեժիմը) պարտադիր ուղեցո՞ւյց է բոլոր մանկապարտեզների համար:
*- Յուրաքանչյուր մանկապարտեզ պետք է կազմի իր պայմաններին և առանձնահատկություններին համապատասխան ռեժիմ, ունենալով օրինակելի ռեժիմի տարբերակը:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

87. Որո՞նք են պարապմունքից դուրս անցկացվող աշխատանքի ձևերն ու միջոցները:
*- Տոներ, զրույցներ, ժամանցներ, ավանդույթներ, ցուցահանդեսներ, գեղարվեստական գրականություն, խաղեր:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

88. Միջին խմբում որո՞նք են տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման բաժինները:
*- Քանակ և հաշիվ, մեծություն, ձև, տարածության մեջ կողմնորոշում, ժամանակի մեջ կողմնորոշում:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

89. Միջին խմբում մինչև ո՞ր թվանշաններին են ծանոթանում երեխաները:
*- 1-5:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.)

90. Տարրական մաթեմատիկայից միջին խմբում տարեկան քանի՞ պարապմունք է նախատեսվում:
*- Տարեկան 36:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

91. Տարրական մաթեմատիկայի պարապմունքները միջին խմբում քանի՞ տեսակ են լինում:
*- Համընդհանուր և համակցված:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

92. Ի՞նչ մասերից է բաղկացած միջին խմբի երաժշտության պարապմունքը:
*- Ներգրավիչ, հիմնական, ամփոփիչ:*

Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

93. Ծրագրից դուրս ընդգրկված երգերը ու՞մ կողմից են հաստատվում:
*- ԿԳ նախարարության հանձնաժողովի կողմից:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

94. Ի՞նչ տեսակներ ունեն դիդակտիկ խաղերը:
*- Խոսքի զարգացման, երաժշտական, մաթեմատիկական, բնագիտական:*

(Հիմք` «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում», 2007թ.:)

95. Ի՞նչ պետք է պահպանել խաղերի ընթացքում:
*- Կանոնները:*

(Հիմք` «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում», 2007թ.:)

96. Պայմանների առկայության դեպքում կարճաժամկետ խմբերի քանի՞ հերթափոխ կարելի է ունենալ:
*- 2- 3 հերթափոխ:*

(Հիմք` «Աշխատանքի կազմակերպումը նախադպրոցական հաստատությունների կարճաժամկետ խմբերում», Ա. Հովհաննիսյան, Մ. Սարգսյան, 2008թ.:)

97. Ո՞րն է նախադպրոցական հաստատության հիմնական խնդիրը:
*- Բարելավել ընտանիքի և հասարակության պահանջը երեխայի ներդաշնակ զարգացման գործում:*

(Հիմք` «Նախադպրոցական հաստատության կառավարումը», Ա. Հովհաննիսյան, 2008թ. Երևան:)

98. Ո՞րն է երեխայակենտրոն ուսուցումը:
*- Բացահայտել յուրաքանչյուր երեխայի անկրկնելիությունն ու անհատականությունը:*

(Հիմք` «Դպրոցի շեմին», Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:)

99. Ի՞նչ է ինտերակտիվ մեթոդը:
*- Ուսուցանել երկխոսության միջոցով:*

(Հիմք` «Դպրոցի շեմին», Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:)

100. Ինչպիսի՞ պարապմունքներ են կազմակերպվում խառը խմբերում:
*- Պարապմունք ամբողջ խմբի հետ, պարապմունք ենթախմբերով, պարապմունք ավագ տարիքային խմբերի հետ:*

(Հիմք` «Դպրոցի շեմին», Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:)

---

*Հ ա վ ե լ վ ա ծ 4*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26-ի N 169/Ս հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ

# ՀԱՐՑԱՇԱՐ

1. Որո՞նք են նախադպրոցական տարիքային փուլերը:
*- Նախադպրոցական տարիքային փուլերն են`*
*վաղ տարիք-մինչև 3 տարեկան,*
*կրտսեր նախադպրոցական տարիք-3-5 տարեկան,*
*ավագ նախադպրոցական 5-6 տարեկան.*

(Հիմք` «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 9, 2-րդ մաս:)

2. Ինչո՞ւ է անհրաժեշտ մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը:
*- Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին:*

(Հիմք` «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար»:)

3. Որո՞նք են դիդակտիկ խաղերի կառուցվածքային բաղադրիչները:
*- Նպատակ (խնդիր), գործողություն, հստակ կանոններ, որոնց կատարումը պարտադիր է երեխաների համար և արդյունք:*

(Հիմք` «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում. ավագ խումբ)»:

4. Ինչի՞ հիման վրա են հաստատվում Պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակները:
*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած օրինակելի հաստիքացուցակի հիման վրա:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 30, մաս 6:)

5. Որո՞նք են մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության ուղղությունները.
*- Շաբաթական կամ ամսական լրատուներ, ծնողական ժողովներ, ծնողական համաժողովներ, առավոտյան և օրվա 2-րդ կեսին հանդիպումներ, մտքերի փոխանակումներ, բաց դռների օրեր, ցերեկույթներ, մանկավարժական հյուրասրահներ, խորհրդատվություններ, գաղափարների տոնավաճառ, բարի գործերի օրեր, կլոր սեղան, զրույցներ, տոնակատարություններ, սպորտային միջոցառումներ:*

(Հիմք` «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար»:)

6. Ի՞նչ եք հասկանում «խաղը նախադպրոցականի առաջատար գործունեությունն է» ասելով:
*- Խաղը երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ է առաջացնում` նպաստելով հոգեկան բոլոր գործընթացների զարգացմանը: Նրանում սաղմնավորվում են ուսումնական գործունեության հիմքերը, որը առաջատար է դառնում դպրոցական տարիներին:*

(Հիմք` Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Ա. Ա. Նալչաջյանի թարգմանությամբ, «Լույս» հրատարակչություն 1977թ.:)

7. Ի՞նչ է աքսելերացիայի երևույթը:
*- Acseleratio-բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է «արագացում» և բնութագրվում է աճող սերնդի արագընթաց ֆիզիկական զարգացմամբ, ֆիզիկական և սեռային աննախադեպ արագ հասունացմամբ:*
*Հոգեբանները պայմանավորում են աքսելերացիան տեղեկատվական հոսքի կտրուկ ավելացմամբ, ինչը նպաստում է հոգեկան գործընթացների առավել ինտենսիվ զարգացմանը:*

(Հիմք` «Նախադպրոցական մանկավարժություն» 2005 ուսումնական ձեռնարկ:)

8. Ո՞րն է երեխայի մտավոր զարգացման և դաստիարակության հիմքը:
*- Զգայական դաստիարակությունը:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր»:)

9. Ինչպիսի՞ որակավորման պահանջներ են սահմանված Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողի համար:
*- Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա`*
*միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), մասնագիտական կրթություն` համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:*

(Հիմք` «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը հաստատելու մասին» ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 13 հունիսի 2011 թվականի N111-Ն հրաման, IV բաժին, 3-րդ կետ:)

10. Որո՞նք են դիդակտիկայի ավանդական սկզբունքները:
*- Ուսուցման զննականության սկզբունքը,*
*- Ուսուցման գիտականության և մատչելիության սկզբունքը,*
*- Ուսուցման սիստեմատիկության և հաջորդականության սկզբունքը,*
*- Ուսուցման ընթացքում գիտակցա-*

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 4*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26-ի N 169/Ս հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ

# ՀԱՐՑԱՇԱՐ

*կանության և ակտիվության սկզբունքը:*

(Հիմք՝ «Նախադպրոցական մանկավարժություն», 2005թ, ուսումնական ձեռնարկ:)

11. Որո՞նք են դիդակտիկայի ժամանակակից սկզբունքները:
- *Զարգացնող ուսուցման սկզբունք,*
- *Դաստիարակող ուսուցման սկզբունք,*
- *Տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման, անհատական մոտեցման սկզբունքները:*

(Հիմք՝ «Նախադպրոցական մանկավարժություն», 2005թ., ուսումնական ձեռնարկ:)

12. Ի՞նչ է ծախլիկությունը:
*- Զարգացման առանձնահատկություն, որը պայմանավորված է ուղեղի կիսագնդերի գործունեությամբ:*

(Հիմք՝ «Ձախլիկների զարմանահրաշ աշխարհը», 2009թ., ուսումնամեթոդական ձեռնարկ:)

13. Ինչի՞ն են նպաստում մատների վարժությունները:
*- Խթանում են գլխուղեղի խոսքի կենտրոնները և կտրուկ ակտիվացնում խոսքային գոտիների համաձայնեցված գործունեությունը, ինչն ի վերջո խթանում է խոսքի զարգացումը, ինչպես նաև նպաստում են մարդու ստեղծագործական հնարավորությունների և մտածողության զարգացանը:*

(Հիմք՝ «Հրաշք մատիկներ», 2010:)

14. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ինչպիսի՞ տարիքային խմբեր են ձևավորվում.
*- վաղ հասակի I խումբ - մինչև 1 տարեկան,*
*- վաղ հասակի II խումբ - մեկից մինչև 2 տարեկան,*
*- կրտսեր առաջին խումբ - երկուսից երեք տարեկան,*
*- կրտսեր երկրորդ խումբ - երեքից չորս տարեկան,*
*- միջին խումբ - չորսից հինգ տարեկան,*
*- ավագ խումբ - հինգից վեց տարեկան:*

(Հիմք՝ ԼՂՀ ԿԳ նախարարի 13 հունիսի 2011թ. N 113-Ն հրամանը «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին» V բաժին, 6-րդ կետ, I-ին ենթակետ:)

15. Որո՞նք են աշխատանքային գործունեության կազմակերպման հիմնական ձևերը մանկապարտեզում:
*- Հանձնարարությունները, հերթապահությունը, ընդհանուր աշխատանքը /աշխատանք բակում՝ հողամասում, աշխատանք բնության անկյունում/, ինքնասպասարկումը, առարկայական-գործնական աշխատանք, ձեռքի աշխատանք:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր»:)

16. Որո՞նք են խոսքի զարգացման պարապմունքների խնդիրները:
*- Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում, խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում, բառապաշարի հարստացում, կապակցված խոսքի զարգացում:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր»:)

17. Երեխայի զարգացման ո՞ր ոլորտներն են ներառվում նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակության մեջ:
*- Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝*
*1. շարժողական ոլորտ,*
*2. խոսքի զարգացում,*
*3. հուզական, անձնային, սոցիալական զարգացում,*
*4. իմացական ոլորտ,*
*5. ինքնասպասարկում և անվտանգություն,*
*6. վերաբերմունք սովորելու նկատմամբ:*

(Հիմք՝ ԼՂՀ ԿԳ նախարարի 2011թ. հունիսի 13-ի N 113-Ն հրամանը, «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին», VI բաժին, 8-րդ կետ:)

18. Ինչպիսի՞ն պետք է լինի ժամանակակից դաստիարակը:
*- Գրագետ, ազատ տիրապետի հայերեն գրավոր և բանավոր խոսքին, կարողանա աշխատել համակարգչով, օգտվել համացանցից /ինտերնետից/. հմտորեն օգտվել կենցաղային տեխնիկայից, տիրապետի մանկավարժական առաջադեմ տեխնոլոգիաների, մեթոդների, լինի նախաձեռնող, պրպտող, ստեղծող-ստեղծագործող…:*

(Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար»:)

19. Որո՞նք են նախադպրոցական կրթության բնագավառի կառավարման մարմինները:
*- Նախադպրոցական կրթության համակարգի կառավարումն իրականացնում են.*
*ա) կրթության պետական կառավարման լիազորված մարմինը,*
*բ) տեղական ինքնակառավարման մարմինները:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 15:)

20. Խաղերի ի՞նչ տեսակներ գիտեք:
*- Սյուժետադերային խաղեր, դիդակտիկ, զարգացնող, թատերականացված խաղեր, շարժախաղեր, խաղ-զվարճալիքներ, խաղային իրավիճակներ…:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր»:)

21. Որո՞նք են կերպարվեստային գործունեության տեսակները:
*- Նկարչություն, ապլիկացիա, ծեփ, կառուցողական, աշխատանք թղթով:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր»:)

22. Խոսքի զարգացման ի՞նչ տեսակներ են իրականանում մանկապարտեզում:
*- Ոտանավորի ուսուցում և խորացում, պատմումներ՝ իրենց բոլոր տեսակներով (պլանով կամ ցուցումով, դաստիարակի օրինակով, կիսատ թողած պատմության շարունակում, կոլեկտիվ պատմումներ նամակագրության ձևով, նկարով պատմումներ, ստեղծագործական պատմումներ և այլն), վերապատմում, գեղարվեստական գրականության ընթերցանություն, դիդակտիկ խաղ, զրույց:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր»:)

23. Ո՞րն է դաստիարակի դերը դիդակտիկ խաղերի կազմակերպման գործում:
*- Նախապատրաստում է խաղի անցկացման տեղը, ընտրում է որակյալ դիդակտիկ նյութեր, ապահովում է երեխային առաջադրվող պահանջները, այն է՝ ճանաչողությունը, շփումը, խաղը և ինքնահաստատումը, խաղն անցկացնում է հմտորեն, ուրախ և հետաքրքիր միջոցներով:*

(Հիմք՝ «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում», Երևան, 2008թ.:)

24. Մինչև ո՞ր տարիքի երեխաներն են ընդունվում նախադպրոցական հաստատություն և ինչպե՞ս:
*- Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում:*

(Հիմք՝ «ԼՂՀ պետական նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրություն, ԼՂՀ կառավարության 2007թ. մարտի 27-ի թիվ 131 որոշում:)

25. Ի՞նչ է ներառում երեխայի մտավոր դաստիարակությունը:
*- Մտավոր դաստիարակությունը ներառում է երեխայի ինտելեկտուալ կարողությունների ու հմտությունների, երևակայության, ընկալման, մտածողության, հիշողության և մտավոր ընդունակությունների զարգացումը:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր»:)

26. Պարապմունքների ի՞նչ տեսակներ են կազմակերպվում մայրենի լեզվից:
*1. Ոտանավորի ուսուցում և խորացում*
*2. Պատմումներ*
*3. Վերապատմում*
*4. Գեղարվեստական գրականության ընթերցանություն*
*5. Դիդակտիկ խաղ*
*6. Զրույց*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր»:)

27. Ի՞նչ է թեմատիկ ուսուցումը:
*- Թեմատիկ ուսուցումը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միավորում՝ մեկ հետաքրքիր գաղափար ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են տարբեր առարկաներից բովանդակային միավորներ:*

(Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար»:)

28. Որո՞նք են ուսուցման տեսության՝ դիդակտիկայի կարևորագույն հասկացությունները:
*- Գիտելիքները, կարողությունները, հմտությունները:*

(Հիմք՝ «Նախադպրոցական մանկավարժություն», 2005թ., ուսումնական ձեռնարկ:)

29. Ի՞նչ է մեթոդը:
*- Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, ուղի:*

(Հիմք՝ Նախադպրոցական մանկավարժություն, 2005թ., ուսումնական ձեռնարկ:)

30. Ի՞նչ լեզվով է իրականացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների գործավարությունը:
*- Հայերեն:*

(Հիմք՝ «Լեզվի մասին» ԼՂՀ օրենք հոդվ.4 ա) կետ:)

31. Ի՞նչ գիտություն է դիդակտիկան: Ի՞նչ է ուսումնասիրում այն:
*- Դիդակտիկան մանկավարժության մասնաճյուղ է, ուսուցման և կրթության մասին տեսական ու կիրառական գիտություն: Այն ներկայացնում է կրթության բովանդակությունը և առաջարկում իրականացման մեթոդներ, միջոցներ և տեխնոլոգիաներ:*

(Հիմք՝ «Նախադպրոցական մանկավարժություն», 2005թ., ուսումնական ձեռնարկ:)

32. Մանկավարժական հաղորդակցման ինչպիսի՞ ոճեր գիտեք և որի՞ն եք տալիս նախապատվությունը:
*- Դաստիարակության ուսումնակարգապահական և անհատակողմնորոշիչ մոդել:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր»:)

33. Ի՞նչ է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը:
*- Չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է երեխայի զարգացման, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները:*

(Հիմք՝ ԼՂՀ ԿԳ նախարարի 2011թ. հունիսի 13-ի N 113 - Ն հրամանը «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին»:)

34. Ի՞նչ աշխատանք է իրականացնում դաստիարակը մանկապարտեզում:
*- Դաստիարակը մանկապարտեզում մանկավարժական գործընթացի կազմակերպիչն ու ղեկավարն է:*
*Դաստիարակի պաշտոնեական պարտականությունները ներառում են սաների կյանքի և գործունեության պլանավորումը, ամենօրյա աշխատանքի կազմակերպումը, երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման, սոցիալական և աշխատանքային հարմարունակության պայմանների կազմակերպումը, երեխաների անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ՝ նրանց հետ շտկողական-զարգացնող և հոգեֆիզիկական աշխատանքների կազմակերպումը:*

(Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար»:)

35. Որո՞նք են 5-6 տարեկանների դաստիարակության ծրագրային խնդիրները.
*- Նախադպրոցականի ֆիզիկական դաստիարակություն.*
*- Նախադպրոցականի մտավոր դաստիարակություն.*

☞14

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

*Հ ա վ ե լ վ ա ծ 4*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26-ի N 169/Ա հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ

# *Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր*

13 ☜ *- նախադպրոցականի բարոյական դաստիարակություն.*

*- նախադպրոցականի աշխատանքային դաստիարակություն.*

*- նախադպրոցականի էկոլոգիական դաստիարակություն.*

*- նախադպրոցականի գեղագիտա-գեղարվեստական դաստիարակություն.*

*- նախադպրոցականի ուսուցման կազմակերպումը:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր»:)

36. Ըստ ենթակայության` նախադպրոցական ուսումնական հաստատություններն ինչպիսի՞ն կարող են լինել:

*- Պետական, համայնքային ենթակայության և ոչ պետական:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 13, 1-ին մաս:)

37. Ի՞նչ է ուշադրությունը: Որո՞նք են ուշադրության տեսակները:

*- Ուշադրությունը մարդու հոգեկան ակտիվության ուղղվածությունն է դեպի այս կամ այն առարկան կամ երևույթը: Ուշադրությունը լինում է կամածին և ոչ կամածին:*

(Հիմք` Ա.Նալչաջյան, Ս.Մկրտչյան, Հոգեբանության ներածություն-8, Երևան, 2001թ.:)

38. Ի՞նչ եք հասկանում ճգնաժամային տարիք ասելով: Ի՞նչ գիտեք 3 տարեկանի ճգնաժամի մասին:

*- Ճգնաժամերը կապված են երեխայի ինքնուրույնություն ձեռք բերելու ցանկության հետ և արտահայտվում են աֆեկտիվ ռեակցիաներով:*

*3 տարեկանում փոխվում է երեխայի վարքը, մեծանում է նրա ինքնուրույնության ձգտումը: Նա գիտակցում է, որ ինքնուրույն կարող է շատ գործողություններ կատարել և ուզում է լինել իր վարքի, կամքի տերը ու պնդում է դա: Այդ դրսևորումները մեծահասակների կողմից գնահատվում են որպես համառություն, կամակորություն: Երեխան ոչ միայն սկսում է թելադրել իր կամքը, այլ նաև իր նշանակալիության ապացույցներ է պահանջում` հրաժարվելով կատարել մեծահասակների ասածները:*

(Հիմք` Ծնողական կրթություն, Վերապատրաստողների ուղեցույց, ՀՀ ԿԳՆ, ՄԱԿ-ի գրասենյակ, «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ, Երևան, 2005թ.:)

39. Ի՞նչ է մտագրոհը կամ մտքերի տարափը:

*- Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդներից ամենատարածվածն է, որի նպատակը մտքերի կուտակման, բացահայտման, արտահայտման հնարավորության ստեղծումն է:*

(Հիմք` «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար»:)

40. Որո՞նք են մանկապարտեզում կիրառվող փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդները:

*- Մտագրոհ կամ մտքերի տարափ, զրույց, հարցեր ու հարցադրումներ, իրավիճակի վերլուծություն, դերային խաղ, նկարներով ընթերցանություն:*

(Հիմք` «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար»)

41. Որո՞նք են տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման ծրագրի բաժինները մանկապարտեզի ավագ խմբում.

- *Քանակ և հաշիվ,*
- *մեծություն,*
- *ձև,*
- *տարածության մեջ կողմնորոշում,*
- *ժամանակի մեջ կողմնորոշում:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր»:)

42. Նախադպրոցական հաստատությունում տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ինչպիսի՞ խմբեր են ձևավորվում և ինչպե՞ս է իրականացվում դրանց գործունեությունը:

*- Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:*

(Հիմք` ԼՂՀ նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն, ԼՂՀ կառավարության 2007թ. մարտի 27-ի թիվ 131 որոշում:)

43. Ինչպե՞ս է կազմվում մանկապարտեզում օրվա ռեժիմը (կանոնակարգը):

*- Մանկապարտեզում օրվա ռեժիմը կազմվում է ԿԳՆ-ի կողմից հաստատված կրթական համալիր ծրագրով սահմանված օրվա օրինակելի ռեժիմի տարբերակի հիման վրա, հաշվի առնելով տվյալ հաստատության պայմաններն ու առանձնահատկությունները:*

(Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր»:)

44. Որո՞նք են երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը մանկապարտեզում:

*- Երաժշտական պարապմունքներ-երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմիկ շարժում-վարժություններ, պարեր, երաժշտական խաղեր, տոներ և զվարճանքներ:*

Հիմք` «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր»:

45. Թվարկե՞ք նախադպրոցական կրթության ոլորտի ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակիցներին:

*1. Նախադպրոցական տարիքի երեխաները*

*2. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները*

*3. Տնօրենները, ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տնօրենների տեղակալները, դաստիարակ-մեթոդիստները, դաստիարակները, ավագ դաստիարակները, ուսուցիչները, լոգոպեդ-ուսուցիչները, հոգեբանները, սոցիալական մանկավարժները, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչները, երաժշտության ուսուցիչները, օղակների, ստուդիաների, խմբակների ղեկավարները և այլ մասնագետներ:*

*4. Բուժաշխատողները:*

*5. Դաստիարակների օգնականները և դայակները:*

*6. Ծնողները և նրանց օրինական ներկայացուցիչները:*

*7. Նախադպրոցական կրթության ոլորտում համապատասխան կրթական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող ֆիզիկական անձինք:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 22:)

46. Որո՞նք են դիդակտիկ խաղերի կառուցվածքային բաղադրիչները:

*- Նպատակ (խնդիր), գործողություն, հստակ կանոններ, որոնց կատարումը պարտադիր է երեխաների համար և արդյունք:*

(Հիմք` «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում (ավագ խումբ)», 2007:)

47. Ե՞րբ և ի՞նչ ժամկետում աշխատողը կարող է հետ վերցնել աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը:

*ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ կետով աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացնելու օրվանից հետո` երեք աշխատանքային օրվա ընթացքում:*

(Հիմք` ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, Հոդված 112, կետ 3:)

48. Ո՞րն է դիդակտիկ վարժությունների նպատակը

*- Այս կամ այն գործողության վերարտադրումն է, որը երեխաները կատարում են ուղղակիորեն, կոնկրետ առաջադրանքի ձևով, որպես դաստիարակի հանձնարարություն:*

(Հիմք` «Դիդակտիկ խաղերը որպես նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր զարգացման միջոց», ուսումնական ձեռնարկ:)

49. Ինչպիսի՞ն է նախադպրոցականի հիշողությունը:

*- Նախադպրոցականի հիշողությունը ոչ կամածին է. մտապահումն ու պահպանումը տեղի է ունենում երեխաների կամքից անկախ:*

(Հիմք` «Տարիքային և մակավարժական հոգեբանություն», Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Ա. Ա. Նալչաջյանի թարգմանությամբ, «Լույս» հրատարակչություն 1977թ.:)

50. Ի՞նչ եք հասկանում «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ» ասելով:

(Հասկացությունը մեկնաբանեք ձեր բառերով):

*- Երեխա, որի ֆիզիկական և (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը` առանց կրթության առանձնահատուկ պայմանների:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 2:)

51. Ի՞նչ է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը:

*- Կրթադաստիարակչական հիմնական ծրագրերի, նպատակների իրագործումը ցույց տվող ցուցանիշների կատարման ընդունված մակարդակն է:*

(Հիմք` Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ, ԼՂՀ ԿԳՆ հր. N 113, 13.06.11թ.:)

52. Դաստիարակի պարտականություններից են`

*- պլանավորումը և սաների ուսուցումն ու դաստիարակությունը:*

(Հիմք` Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց:)

53. Օրական քանի՞ պարապմունք են անցկացնում ավագ խմբում:

*- 15+1:*

(Հիմք` «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

54. Ո՞ր ռեժիմային պահից հետո են անցկացնում պարապմունքները.

*- Նախաճաշից հետո:*

(Հիմք` «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ.:)

55. Տարվա ընթացքում գրաճանաչությունից քանի՞ պարապմունք է նախատեսվում ավագ խմբում:

*- 40:*

(Հիմք` «Վաղ գրաճանաչությունը ավագ խմբում», 2007թ., Երևան:)

56. Գրաճանաչության պարապմունքները քանի՞ րոպե տևողությամբ են անցկացվում ավագ խմբում:

*- 25 - 30 րոպե:*

(Հիմք` «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ., Երևան:)

57. Մանկապարտեզի երեխաները սովորու՞մ են գրել տառերը:

*- Միացնում են ուրվագծերն ու ներկում:*

(Հիմք` «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ., Երևան:)

58. Գրաճանաչության պարապմունքի առաջնահերթ խնդիրներից մեկը:

*- Բառի հնչյունային վերլուծությունը:*

(Հիմք` «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ., Երևան:)

59. Դաստիարակի աշխատանքային օրը քանի՞ ռեժիմային պահերից է բաղկացած:

*- Ընդունելություն, առավոտյան մարմնամարզություն, նախաճաշ, պարապմունքներ, զբոսանք, քուն, հետճաշիկ, խաղ-զվարճալիք, տունճանապարհում.*

(Հիմք` «Նախադպրոցական հաստատության կառավարումը», 2008թ., Երևան:)

60. Դաստիարակի օգնականի աշխատանքային պարտականություններից են.

*- պահպանել սենյակների մաքրությունը, օգնել դաստիարակին, կատարել նրա հանձնարարությունները:*

(Հիմք` «Նախադպրոցական տարիքի երեխաների հիգիենա», Բ. Անջելյան, 1978թ., Երևան:)

61. Խմբերի խտությունը ըստ տարիքային առանձնահատկությունների`

*- մինչև 1,1-3 տ., 3-6տ,*

*- մինչև 1տ.` 10-15, 1- 3 տ.` 15-20, 3-6տ. ` 25-30:*

(Հիմք` ԼՂՀ ԿԳՆ նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի հաստիքացուցակ, 2007թ.:)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

*Հավելված 4*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 26-ի N 169/Մ հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ

# ՀԱՐՑԱՇԱՐ

62. Ի՞նչ է ընդգրկվում դաստիարակի աշխատանքային պլանի մեջ:
*- Օրվա ռեժիմային պահերը:*

(Հիմք՝ Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի աշխատանքային փաթեթ, մեթոդական ուղեցույց:)

63. Դաստիարակի օգնականը իրավունք ունի՞ պարապմունք անցկացնել:
*- Ո՛չ:*

(Հիմք՝ Դաստիարակի օգնականի աշխատանքային պարտականությունները:)

64. Դաստիարակը պատասխանատո՞ւ է երեխաների առողջության համար:
*- Այո. բժշկական աշխատողների հետ համատեղ ապահովում է երեխաների առողջության ապահովումը:*

(Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:)

65. Ինչպե՞ս վարվել կամակոր երեխայի հետ:
*- Ուսումնասիրել երեխայի անհատական առանձնահատկությունները, օգտագործելով բացատրական-համոզիչ մեթոդը:*

(Հիմք՝ Նախադպրոցականի դաստիարակության հարցեր, Ա. Հովհաննիսյան, 2005թ., Երևան:)

66. Ծնողների հետ աշխատանքի ի՞նչ ձևեր կան:
*- Ծնողական անկյուն, ծնողական ժողով, անհատական զրույց, ծնողների հետ սեմինարներ, այցելություն տներ, աշխատանք ծնողական կոմիտեի հետ:*

(Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:)

67. Ո՞վ է վարում երեխաների հաճախումների մատյանը:
*- Դաստիարակը:*

(Հիմք՝ Դաստիարակի աշխատանքային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:)

68. Չմռանը երեխաներին տանո՞ւմ են զբոսանքի:
*- Այո:*

(Հիմք՝ «Նախադպրոցական տարիքի հիգիենան», Բ. Անջելյան, 1978թ., Երևան:)

69. Ո՞վ է անցկացնում օրինակելի պարապմունքը:
*- Դաստիարակը:*

(Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:)

70. Ավագ խմբում խոսքի զարգացումից և գրաճանաչությունից քանի՞ պարապմունք է նախատեսվում շաբաթվա ընթացքում:
*- 4:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

71. Երեխայի բարեկիրթ վարքի կուլտուրայի դաստիարակման համար լավագույն միջոցը ո՞րն է:
*- Բարոյագիտական զրույցները:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:)

72. Ի՞նչ մեթոդներով ու միջոցներով հասնել երեխաների էկոլոգիական դաստիարակությանը:
*- Դիտումների, էքսկուրսիաների, զբոսանքների, նկարչության, ծեփի պարապմունքների, բանաստեղծությունների, երգերի, հեքիաթի ընթերցումների, էկոլոգիական խաղերի միջոցով:*

(Հիմք՝ «Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում», 2007թ., Երևան:)

73. Ֆիզդաստիարակության խնդիրները:
*- Առողջության պահպանում և ամրապնդում, օրգանիզմի կոփում, ճիշտ կեցվածքի ձևավորում, բարոյակամային հատկանիշների որակական գծերի դաստիարակում, ֆիզիկական որակների ձևավորում:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

74. Օրվա ընթացքում դաստիարակը ինչքա՞ն ժամանակ պետք է հատկացնի շարժական խաղերին:
*- 30 րոպեից ոչ պակաս:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

75. Որո՞նք են ֆիզդաստիարակության հիմնական շարժումները մանկապարտեզում:
*- Քայլ, վազք, ցատկ, նետում, մագլցում, սողանցում, հավասարակշռություն:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

76. Նկարչության պարապմունքների նպատակը:
*- Շրջապատող առարկայական աշխարհի ու երևույթների պատկերումն է երանգավորման և գրաֆիկական եղանակով:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

77. Գեղագիտական դաստիարակության կազմակերպման ինչպիսի՞ ձևեր կան:
*- Խաղ-պարապմունքներ, պարապմունքներ, վիկտորինաներ, տոնահանդեսներ, էքսկուրսիաներ:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

78. Ինչպիսի՞ կերպարվեստային պարապմունքներ են անցկացվում մանկապարտեզում:
*- Նկարչության, ծեփի, ապլիկացիայի, կառուցողական աշխատանքի:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

79. Ի՞նչ է խաղը երեխայի կյանքում:
*- Խաղը ինքնագնահատման, ինքնաճանաչման ասպարեզ է, որը հնարավորություն է տալիս դրսևորել նախաձեռնություն, ճարպկություն, կոլեկտիվ հարմարվողականություն:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

80. Ինչպիսի՞ խաղեր են կազմակերպվում մանկապարտեզում:
*- Սյուժետադերային, խաղ-բեմականացում, շարժախաղ, դիդակտիկ խաղ, ինտելեկտուալ խաղ, ազատ խաղ, խաղ զվարճալիքներ:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

81. Որո՞նք են աշխատանքային դաստիարակության ձևերը:
*- Հանձնարարություններ, հերթապահություն, ընդհանուր աշխատանք, ինքնասպասարկում, առարկայական-գործնական աշխատանք, ձեռքի աշխատանք:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ., Երևան:)

82. Ձեռքի աշխատանքների տեսակները.
*- կտորով, թելով, բնական նյութերով, ապլիկացիա, փայտով, կավով, արհեստական նյութերով:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ. Երևան:)

83. Ի՞նչ գրավիչ ժամանցներ գիտեք:
*- Մարզական զվարճություններ, տոնահանդեսներ:*

(Հիմք՝ «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ. Երևան:)

84. Ի՞նչ է պահանջում յուրաքանչյուր երեխա դաստիարակից:
*- Անհատական մոտեցում, հավասար իրավունքներ:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:)

85. Շաբաթական քանի՞ պարապմունք է անցկացվում 4-5 տարեկանների խմբում:
*- 12 պարապմունք:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

86.Վերադաս մարմիններից ստացված կանոնակարգը (ռեժիմը) պարտադիր ուղեցու՞յց է բոլոր մանկապարտեզների համար:
*- Յուրաքանչյուր մանկապարտեզ պետք է կազմի իր պայմաններին և առանձնահատկություններին համապատասխան ռեժիմ, ունենալով օրինակելի ռեժիմի տարբերակը:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

87 Որո՞նք են պարապմունքից դուրս անցկացվող աշխատանքի ձևերն ու միջոցները:
*- Տոներ, զրույցներ, ժամանցներ, ավանդույթներ, ցուցահանդեսներ, գեղարվեստական գրականություն, խաղեր:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

88. Միջին խմբում որո՞նք են տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման բաժինները:
*- Քանակ և հաշիվ, մեծություն, ձև, տարածության մեջ կողմնորոշում, ժամանակի մեջ կողմնորոշում:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

89. Միջին խմբում մինչև ո՞ր թվանշաններին են ծանոթանում երեխաները:
*- 1-5:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

90. Տարրական մաթեմատիկայից միջին խմբում տարեկան քանի՞ պարապմունք է նախատեսվում:
*- Տարեկան 36:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

91. Տարրական մաթեմատիկայի պարապմունքները միջին խմբում քանի՞ տեսակ են լինում:
*- Համընդհանուր և համակցված:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

92. Ի՞նչ մասերից է բաղկացած միջին խմբի երաժշտության պարապմունքը:
*- Ներգրավիչ, հիմնական, ամփոփիչ:*

(Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

93. Ծրագրից դուրս ընդգրկված երգերը ո՞ւմ կողմից են հաստատվում:
*- ԿԳ նախարարության հանձնաժողովի կողմից:*

(Հիմք՝ « Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:)

94. Ի՞նչ տեսակներ ունեն դիդակտիկ խաղերը:
*- Խոսքի զարգացման, երաժշտական, մաթեմատիկական, բնագիտական:*

(Հիմք՝ «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում», 2007թ.:)

95. Ի՞նչ պետք է պահպանել խաղերի ընթացքում:
*- Կանոնները:*

(Հիմք՝ «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում», 2007թ.:)

96. Պայմանների առկայության դեպքում կարճաժամկետ խմբերի քանի՞ հերթափոխ կարելի է ունենալ:
*- 2- 3 հերթափոխ:*

(Հիմք՝ «Աշխատանքի կազմակերպումը նախադպրոցական հաստատությունների կարճաժամկետ խմբերում», Ա. Հովհաննիսյան, Մ. Սարգսյան, 2008թ.:)

97. Ո՞րն է նախադպրոցական հաստատության հիմնական խնդիրը:
*- Բարելավել ընտանիքի և հասարակության պահանջը երեխայի ներդաշնակ զարգացման գործում:*
(Հիմք՝ «Նախադպրոցական հաստատության կառավարումը», Ա. Հովհաննիսյան, 2008թ. Երևան:)

98. Ո՞րն է երեխայակենտրոն ուսուցումը:
*- Բացահայտել յուրաքանչյուր երեխայի անկրկնելիությունն ու անհատականությունը:*
(Հիմք՝ «Դպրոցի շեմին», Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:)

99. Ի՞նչ է ինտերակտիվ մեթոդը :
*- Ուսուցանել երկխոսության միջոցով:*
(Հիմք՝ «Դպրոցի շեմին», Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:)

100. Ինչպիսի՞ պարապմունքներ են կազմակերպվում խառը խմբերում:
*- Պարապմունք ամբողջ խմբի հետ, պարապմունք ենթախմբերով, պարապմունք ավագ տարիքային խմբերի հետ:*

(Հիմք՝ «Դպրոցի շեմին», Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:)

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# *Մրցույթ` ԼՂՀ Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Ասկերանի, Քաշաթաղի շրջանների ներքոհիշյալ գյուղերի դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար*

### Մարտակերտի շրջան

Վանքի մ/դ - պատմություն - 9 ժամ, մաթեմատիկա-20 ժամ, ֆիզկուլտուրա - 6 ժամ

Թալիշի մ/դ - քիմիա - 10 ժ, կենսաբանություն - 12 ժամ, ռուսաց լեզու - 28 ժամ, աշխարհագրություն - 10 ժամ

Չլդրանի մ/դ - ֆիզիկա - 12 ժամ, Հայ եկեղեցու պատմություն - 7 ժամ

Ն. Սեյսուլանի մ/դ - քիմիա - 10 ժամ, կենսաբանություն - 12 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 20 ժամ, ՆԶՊ - 1 հաստիք, մաթեմատիկա - 22 ժամ, ինֆորմատիկա - 6 ժամ, դասվար - 19 ժամ

Հարգոմերի մ/դ - օտար լեզու (գերմաներեն) - 8 ժամ, ՆԶՊ - 1 հաստիք, մաթեմատիկա - 12 ժամ

Մաղավուզի մ/դ - ֆիզիկա - 12 ժամ, ՆԶՊ - 1 հաստիք, մաթեմատիկա - 18 ժամ, դասվար - 18 ժամ

Դրմբոնի մ/դ - մաթեմատիկա - 8 ժամ

Կուսապատի մ/դ - ռուսաց լեզու - 22 ժամ, մաթեմատիկա - 15 ժամ

Պողոսագոմերի մ/դ - ֆիզիկա - 5 ժամ, ՆԶՊ - 1 հաստիք, աշխարհագրություն - 8 ժամ,

Ն. Այգեստանի մ/դ - ֆիզիկա - 12 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 14 ժամ, մաթեմատիկա - 25 ժամ, ինֆորմատիկա - 6 ժամ, դասվար - 20 ժամ, ֆիզկուլտուրա - 12 ժամ

### Մարտունու շրջան

Մարտունու հ.1 - ֆիզիկա - 8 ժամ, կենսաբանություն - 8 ժամ, պատմություն - 8 ժամ, հայոց լեզու - 8 ժամ

Մարտունու հ/դ - դասվար - 19 ժամ,

Ջրավանի մ/դ - օտար լեզու (անգլերեն) 18 - ժամ, հայոց լեզու - 15 ժամ, ֆիզկուլտուրա - 8 ժամ

Ծովատեղի հ/դ - քիմիա - 5 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 10 ժամ, մաթեմատիկա- 33 ժամ, հայոց լեզու - 6 ժամ

Շեխերի մ/դ - ֆիզիկա 15 - ժամ, մաթեմատիկա - 16 ժամ

Նորի մ/դ - աշխարհագրություն - 7 ժամ, մաթեմատիկա - 9 ժամ, երգ - 4 ժամ

Թաղավարդ Կալերի հ/դ - աշխարհագրություն - 8 ժամ

Կոլխոզաշենի մ/դ - քիմիա - 8 ժամ, կենսաբանություն - 8 ժամ

Հերհերի մ/դ - մաթեմատիկա - 10 ժամ

Մաճկալաշենի մ/դ - ռուսաց լեզու - 18 ժամ

Սոսի մ/դ - ռուսաց լեզու - 7 ժամ

Սարգսաշենի մ/դ - ռուսաց լեզու - 6 ժամ, երգ - 6 ժամ

Գիշու մ/դ - ֆիզկուլտուրա - 8 ժամ

Քարահունջի հ/դ - դասվար - 19 ժամ

### Հադրութի շրջան

Ակնաղբյուրի մ/դ. - աշխարհագրություն - 13 ժամ

Մոխրենեսի մ/դ - աշխարհագրություն - 9 ժամ

Ուխտաձորի մ/դ - ինֆորմատիկա - 7 ժամ

Մարիամաձորի մ/դ - քիմիա - 12 ժամ

Քյուրաթաղի հ/դ - քիմիա - 12 ժամ

Այգեստանի հ/դ - ռուսաց լեզու - 20 ժամ

Արևշատի հ/դ - ֆիզիկա 10 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 16 ժամ, ՆԶՊ 1 հաստիք, ֆիզկուլտուրա - 17 ժամ

Առաջամուղի մ/դ - ֆիզիկա - 13 ժամ, մաթեմատիկա - 10 ժամ, ֆիզկուլտուրա - 17 ժամ

Բանաձորի մ/դ - ֆիզիկա - 10 ժամ, քիմա - 7 ժամ, կենսաբանություն 9 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 8 ժամ, ռուսաց լեզու - 15 ժամ, հայոց լեզու - 16 ժամ, ֆիզկուլտուրա - 17 ժամ

Խանձաձորի մ/դ - դասվար - 20 ժամ, ֆիզկուլտուրա - 15 ժամ

Խծաբերդի մ/դ - ֆիզիկա - 10 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 8 ժամ, ռուսաց լեզու - 15 ժամ

### Ասկերանի շրջան

Ծաղկաշատի մ/դ - օտար լեզու (անգլերեն) - 12 ժամ

Սարդարաշենի մ/դ - օտար լեզու (անգլերեն) - 12 ժամ, ՆԶՊ - 0,5+0,3 հաստիք, աշխարհագրություն - 8 ժամ, մաթեմատիկա - 17 ժամ,

Սարուշենի մ/դ - կենսաբանություն - 10 ժամ,

Աստղաշենի մ/դ -ֆիզկուլտուրա - 19,5 ժամ

Սզնեքի - ֆիզիկա - 7 ժամ, մաթեմատիկա - 10 ժամ

Կարմիր գյուղի մ/դ - կենսաբանություն - 10 ժամ, աշխարհագրություն - 12 ժամ, պատմություն - 11 ժամ,

Խանցքի հ/դ - քիմա - կենսաբանություն - 11 ժամ,

Դահրավի հ/դ - օտար լեզու (անգլերեն) - 8 ժամ, ՆԶՊ - 0,5+0,3 հաստիք

Խրամորթի մ/դ, Փառուխի և Արմենակավանի մասն. դ - ֆիզիկա - 6 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 8 ժամ, մաթեմատիկա - 10 ժամ

### Քաշաթաղի շրջան

Քարեգահի մ/դ - մաթեմատիկա, ինֆորմատիկա - 11 ժամ , ֆիզկուլտուրա - 17 ժամ

Գողթանիկի մ/դ - կենսաբանություն - 6 ժամ, դասվար - 20 ժամ1

Ղազարապատի մ/դ - օտար լեզու - 8 ժամ, ռուսաց լեզու - 14 ժամ, քիմիա - 6 ժամ, կենսաբանություն - 8 ժամ

Գանձայի մ/դ - ռուսաց լեզու - 13 ժամ, զինղեկ - 0.5 հաստիք

Վաղազինի մ/դ - օտար լեզու - 8 ժամ, ռուսաց լեզու - 14 ժամ

Վակունիսի հ/դ - ռուսաց լեզու- 12 ժամ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 16 ժամ, ֆիզիկա - 6 ժամ, - դասվար - 20 ժամ

Շալուայի մ/դ - օտար լեզու - 8 ժամ, ռուսաց լեզու - 11 ժամ, զինղեկ - 0.5 հաստիք ֆիզկուլտուրա - 9 ժամ

Մովսեսաշենի հ/դ - հայոց լեզու և գրականություն - 17 ժամ, օտար լեզու - 8 ժամ, դասվար - 20 ժամ, զինղեկ - 0.5 հաստիք

Սուսի մ/դ - աշխարհագրություն - 8 ժամ, պատմություն - 8 ժամ, զինղեկ - 1 հաստիք

Հոչանցի մ/դ - քիմիա - 6 ժամ, կենսաբանություն - 6 ժսմ, աշխարհագրություն - 7 ժամ

Արվականի հ/դ - օտար լեզու - 6 ժամ, պատմություն - 9 ժամ, դասվար - 20 ժամ, ՆԶՊ - 0.5 հաստիք

Մշենիի մ/դ - օտար լեզու - 12 ժամ, պատմություն - 22 ժամ, զինղեկ - 1 հաստիք, ֆիզկուլտուրա - 17 ժամ

Ծիծեռնավանքի մ/դ - մաթեմատիկա, ինֆորմատիկա - 10 ժամ, քիմիա - 6 ժամ, դասվար- 20 ժամ

Տանձուտի հ/դ - հայոց լեզու և գրականություն - 12 ժամ, օտար լեզու - 6 ժամ, պատմություն - 9 ժամ, ֆիզկուլտուրա - 6 ժամ

Մոշաթաղի մ/դ. - հայոց լեզու և գրականություն - 10 ժամ, քիմիա - 10 ժամ, պատմություն - 22 ժամ, դասվար - 20 ժամ

Միրիկի մ/դ. - դասվար - 20 ժամ

Եզնագոմեր մ/դ - օտար լեզու - 12 ժամ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 14 ժամ, ֆիզկուլտուրա - 12 ժամ

Աղանուսի մ/դ - օտար լեզու - 10 ժամ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 10 ժամ, դասվար - 20 ժամ

Վուրգավանի մ/դ - ռուսաց լեզու - 24 ժամ, ֆիզիկա - 8 ժամ, դասվար - 20 ժամ, ֆիզկուլտուրա - 17 ժամ

Ծաղկաբերդի մ/դ - զինղեկ - 1 հաստիք

Ուռեկանի մ/դ - ռուսաց լեզու - 19 ժամ, կենսաբանություն - 7 ժամ, դասվար - 20 ժամ

Սարատակ մ/դ - օտար լեզու - 20 ժամ

Գետափի մասնաճյուղ - դասվար - 20 ժամ

Տիգրավանի մ/դ - օտար լեզու - 12 ժամ, դասվար 20 - ժամ, ֆիզկուլտուրա - 12 ժամ-

Այգեհովիտի մ/դ - հայոց լեզու և գրականություն - 15 ժամ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 10 ժամ, ֆիզիկա - 11 ժամ, աշխարհագրություն - 7ժամ, ֆիզկուլտուրա - 17 ժամ

Գետամեջի մ/դ - հայոց լեզու և գրականություն - 23 ժամ, քիմիա - 6 ժամ, կենսաբանություն - 8 ժամ, ֆիզկուլտուրա - 17 ժամ

Իշխանաձորի մ/դ - մաթեմատիկա, ինֆորմատիկա - 19 ժամ, ֆիզկիա - 8 ժամ, աշխարհագրություն - 8 ժամ, դասվար - 20 ժ, ֆիզկուլտուրա -15ժ.

Արծվաշենի հ/դ - հայոց լեզու և գրականություն - 10 ժ, օտար լեզու - 8 ժ, կենսաբանություն - 8 ժ, պատմություն - 10 ժ, զինղեկ - 0,5 հաստիք, ֆիզկուլտուրա - 8 ժ

Հայկազյանի մ/դ. - ռուսաց լեզու - 9 ժ,, կենսաբանություն - 16 ժ, պատմություն - 6 ժ, դասվար - 20 ժ, ֆիզկուլտուրա - 20 ժ

Կումայրիի մ/դ - օտար լեզու - 12 ժ, ռուսաց լեզու - 28 ժ

Կովսականի մ/դ - օտար լեզու - 14 ժ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 18 ժ, ֆիզիկա- 7 ժ, պատմություն- 22ժ, զինղեկ -1 հաստիք, ֆիզկուլտուրա - 21 ժ

Միջնավանի մ/դ - հայոց լեզու և գրականություն - 20 ժ, օտար լեզու - 20 ժ, պատմություն - 20 ժ

Դիցմայրիի հ/դ - հայոց լեզու և գրականություն - 12 ժ, օտար լեզու - 6 ժ, ռուսաց լեզու - 12 ժ, դասվար - 20 ժ

Վանի մ/դ - հայոց լեզու և գրականություն - 12 ժ, օտար լեզու - 12 ժ, քիմիա - 6 ժ, կենսաբանություն - 6 ժ, պատմություն - 17 ժ

Վարդուտի մ/դ - օտար լեզու - 10 ժ, ռուսաց լեզու - 16 ժ, կենսաբանություն - 16 ժ,

Հերիկի հ/դ - հայոց լեզու և գրականություն - 15 ժ, օտար լեզու - 10 ժ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 23 ժ, ֆիզիկա - 7 ժ, քիմիա - 6 ժ, աշխարհագրություն - 6 ժ, պատմություն - 15 ժ, դասվար - 20 ժ, զինղեկ - 0.5 հաստիք, ֆիզկուլտուրա - 12 ժ

Բազմատուսի մ/դ. - ռուսաց լեզու - 9 ժ, մաթեմատիկա, ինֆորմատիկա - 12 ժ, կենսաբանություն - 8 ժ, դասվար - 20 ժ, ֆիզկուլտուրա - 6 ժ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով` գրավոր և բանավոր` ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի h. 25-26-ում և տեղադրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայքէջում:

***Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում`***

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում` նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 1),
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար` 3x4 չափսի,
7. Այլ պետությունների քաղաքացիները` Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

*Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:*

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 23-ը ներառյալ, ամեն օր` ժամը 9:00 - 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից` համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի` ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 23-28-ը ընկած ժամանակահատվածում: Տեղը, ժամը և այլ տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

ԼՈՒՍԱՐԱՐ
խմբագիր` ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր` «Լուսարար» ՓԲԸ
✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ` 3150: Ծավալը` տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության` 03.08.2013թ.:
«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: